

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ 29-ԱՄԵԱԿԸ

Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հրապարակեց Հայաստանի Անկախությունը շնորհալորող յօդուած մը, ուր շեշտը կը դրուէր այն իրողութեան վրայ, որ սուրիական-հայաստանեան բարեկամական յարաբերութիւնները արձանագրուած են պատմութեան էջերուն մէջ: Սուրիա եւ Հայաստան յաճախ ունեցած են նոյն մօտեցումը մարդկային, մշակութային եւ քաղաքական տարբեր հարցերու նկատմամբ, յարգելով պետութիւններու գերիշխանութեան պահպանման գաղափարը եւ միջազգային խաղաղապահական օրէնքները:

Յօդուածին մէջ կը յիշուէր. «Ամէն տարի, 21 Սեպտեմբերին Հայաստան կը յիշատակէ իր անկախութեան տօնը, այս տարի եւս ողջ հայութիւնը անկախութեան 29-ամեակը կը տօնէ: Սուրիոյ պատմութեան եւ յիշողութեան մէջ արձանագրուած է Սուրիոյ ժողովուրդին գրկաբաց ընդունումը

Շար.՝ էջ 3 >

ՆԱԽԱԳԱՅ ԱՐՄԷՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ՈՒՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ 29-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՐՈՎ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեան շնորհալորական ուղերձ յղած է Հայաստան վերանկախացման 29-ամեակին առիթով: Ստորեւ կը ներկայացնենք Հայաստանի նախագահին ուղերձը.

«Սիրելի՛ հայրենակիցներ, Շնորհալորում եմ մեր կարեւորագոյն պետական տօնի՝ Անկախութեան օրուայ առթիւ:

1991 Սեպտեմբերի 21-ին, միասնաբար եւ վստահ «այո» ասացինք անկախութեանը:

Այն երազ անքները, որ ունէինք անկախութեան ձգտելիս եւ անկախութիւն հռչակելիս, իրականութիւն են ի դէմս մեր անկախ պետականութեան:

Սակայն այս ճանապարհը շարունակուեց է: Մեզ համար, որպէս ժողովուրդ ու պետութիւն, շատ բան դեռ առջեւում է՝ նոր ծրագրեր, նոր նպատակներ, նոր յաղթանակներ:



Շար.՝ էջ 3 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ 29-ԱՄԵԱԿԸ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգիսեանին եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանին, այս առաւօտ՝ Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2020-ին, իր նամակով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը շերմօրէն շնորհալորեց Հայաստանի անկախութեան 29-րդ տարեդարձը: Այս առիթով, Նորին Սրբութիւնը վերահաստատեց, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ վերանորոգ յանձնառութեամբ մասնակից



դառնալ Հայաստանի պետականութիւնը ամրացնող եւ գայն դէպի առաւել բարգաւաճում ու ծաղկում առաջնորդող ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Շար.՝ էջ 3 >

ՀՀ ՀԱՆՔԻ ԴԻ ԶԻՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ ՀՐԱԷՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ 29-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2020-ի երեկոյեան ժամը 7:30-ին, ՀՀ Հալէպի գլխաւոր Հիւպատոս Արմեն Սարգսեանի հրաւերով տեղի ունեցաւ



Հալէպի հայ հոգեւոր երեք պետերու, հալէպահայ կազմակերպութիւններու եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներու ընդունելութիւնը Հիւպատոսարանի շէնքէն ներս, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 29-ամեակին առիթով: Պատկածեւ ժառիր համավարակին պատճառով հրաւիրեալներուն թիւը

Շար.՝ էջ 12 >

ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ. «ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՆԱՐԴԱԿ ԱՐժԷ Է»

21 Սեպտեմբերին Armnews պատկերասփիւռի «Երեկոյեան Լուրեր» հաղորդաշարի հիւրն էր ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր-խաչատուրեան: ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը շնորհալորած է ողջ հայ ժողովուրդը Հայաստանի Անկախութեան 29-րդ ամեակին առիթով, ապա յայտնած, որ 21 Սեպտեմբերը Սփիւռքի մէջ ընկալուած է որպէս 28



Մայիսի շարունակութիւն: Հետեւաբար, 21 Սեպտեմբերը ոչ միայն Սփիւռքի,

Շար.՝ էջ 3 >

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՉԱՔՃԵԱՆ. «21 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆ Է»

Հայաստանի Անկախութեան 29-ամեակին առիթով Լիբանանի «Վանայ Ձայն» ռատիոկայանը գրոյցի հրաւիրած է ՀՀ Բիւրոյի անդամ Բենիամին Պչաքճեանը: Բիւրոյի անդամը շնորհալորած է ողջ հայութիւնը Անկախութեան տօնին առիթով, անդրադարձած է Հայաստանի վերանկախացման պատմութեան, կարեւոր համարած է անկախութեան դերը Հայաստանի Հանրապետութեան յառաջընթացին մէջ,



Շար.՝ էջ 3 >

Խմբագրական

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ (Բ.)

Համայնքի մը վերակազմակերպման գործընթացին մեջ կարելոր դեր ունի նաեւ աշխատանքի անհրաժեշտ ձեւերէն ձեռքբերելու եւ նոր ոճ որդեգրելու պատրաստակամութիւնը: Նորարարութիւն չի նշանակեր սկզբունքներու փոփոխութիւն, այլ աշխատելաճի, որակի փոփոխութիւն, որպէսզի կարելի ըլլայ յարմարիլ ներկայ ժամանակներու երիտասարդութեան մտայնութեան, աշխատելաճին եւ հետաքրքրութիւններուն:

Վարժարաններէն ներս եւս կարելոր է այս փոփոխութիւնը: Մեր վարժարանները, գործիական, ցաւօք մինչեւ օրս ո՛չ կրցան մանկավարժական մնայուն ծրագիր մը որդեգրել, ոչ իւրաքանչիւր դպրոցի մնայուն հոգեբանական խորհրդատու մը ապահովել, հակառակ պատերազմական տարիներուն նման խորհրդատուի խիստ կարելոր դերին, ոչ ալ դասաւանդութեան ոճին մեջ կտրուկ փոփոխութիւններ կրցան մտնել:

Նոյնն է պարագան միութիւններու մեծ մասին: Տակաւին մէկէ աւելի միութիւններ կը կրկնեն նախորդ տարիներուն կազմակերպուած եւ անհրաժեշտ դարձած ձեռնարկները՝ նոյն ոճով, նոյն ձեւով, երբեմն ալ նոյնանման ուղերձներով:

Պսակածեւ ժահրի համաճարակը երեւան բերաւ մեր կառոյցներուն եւ դպրոցներուն առցանց աշխատանքի անվարժութիւնը, հակառակ որ աշխարհով մէկ, տարիներէ ի վեր այս ձեւերը որդեգրուած ու փորձուած էին: Գնահատելի էին կարգ մը նախաձեռնութիւնները, սակայն նախաքայլեր էին պարզապէս, անհրաժեշտ է պատրաստել պաշտօնակազմին ու միութեան կառուցման պատասխանատուները նման աշխատանքներու, ոչ միայն անսպասելի երեւոյթներու դեմ յանդիման օգտագործելու զանոնք, այլ մեր աշխատանքներուն մնայուն մէկ մասը դարձնելով մասնագիտանալու արհեստագիտական այս միջոցներու կիրարկման մեջ:

Նոյնքան կարելոր է աշխատող մարդուժին, ուսուցիչներուն եւ վարչական պատասխանատուներուն համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք շնորհիւ անոնք նաեւ մասնագիտական աճ ապրին եւ դուրս գան տեղեւայլի քանդիչ ընթացքէն: Մենք յաճախ երիտասարդ մասնագետներ կը ներգրաւենք մեր կառոյցներուն մեջ, սակայն իրենց համար հոն մասնագիտական առումով աճ ապրելու պայմաններ չենք ստեղծեր: Հաւանաբար այս իսկ պատճառով անոնցմէ շատեր կը նախընտրեն օտար հաստատութիւններու մեջ ծառայել, թե՛ նիւթական, թե՛ մասնագիտական գոհացուցիչ պայմաններ ձեռք բերելու համար:

Հաստատութիւններու մեջ մասնագետ աշխատողները բանալի մարդիկ պիտի ըլլան, որոնք պիտի առաջնորդեն տուեալ հաստատութեան եւ անոր անդամներուն զարգացումը: Այլապէս մեր հաստատութիւններն ու միութիւնները փոփոխական պայմաններուն հետ յարմարելու ճկունութիւն պիտի չունենան:

Եւ վերջապէս անհրաժեշտ կը գտնենք երկխօսութեան մշակոյթի զարգացումը: Միութիւններու մեջ ներգրաւուողները երկխօսութեան ճամբով պիտի կարենան յառաջ տանիլ, զարգացնել, նոր ծրագիրներով օժտել որեւէ կառոյց, հաստատութիւն կամ միութիւն:

Եթէ չկայ երկխօսութեան մշակոյթ, աշխատանքը կը վերածուի սովորական պարտականութեան մը, որ ոչ մէկ հետաքրքրութիւն կը շարժէ եւ զարգացման առաջնորդող ոչ մէկ քայլի կը մղէ միութեան կանոնը, ուսուցիչը, վարչականը:

Սուրիահայ համայնքի վերակազմակերպումը սոսկ նիւթական ապահովելով չ'ամբողջանար: Վերանայելու ենք մեր աշխատանքի ոճին, մասնագիտական մօտեցումին, միութեան անդամներուն միջեւ երկխօսութեան կիրարկումին: Այս մտայնութեամբ առաջնորդող բանալի անհատներ մեր հաւաքական կեանքը կրնան առաջնորդել դէպի նոր հորիզոններ, որքան ալ ծանր պայմաններու մեջ յայտնուի մեր համայնքը:

Վերակազմակերպումը զարգացում է վերջապէս, իսկ մեզ տկարացնողը ոչ միայն պատերազմն է, այլ նաեւ յառաջացումի հետեւողական ծրագիրներու բացակայութիւնը այլազան ճակատներու վրայ:

«Գ.»

-Սուրիոյ խորհրդարանը Հինգշաբթի, 24 Սեպտեմբերին շարունակեց Համմուտա Սապադի գլխաւորութեամբ սկսած իր երրորդ նստաշրջանի անդրանիկ նիստը, որպէսզի քննարկէ նախարարական հաղորդագրութիւնը, ներկայութեամբ վարչապետ Հուսէյն Արնուսի եւ կարգ մը նախարարներու:

Սուրիոյ վարչապետը պատասխանելով խորհրդարանի կարգ մը անդամներուն հարցադրումներուն ըսաւ, որ կառավարութիւնը իր առաջին հաղորդագրութիւնը պատրաստեց թափանցիկ կերպով, առանց անջատուելու իրականութենէն կամ անտեսելու Սուրիոյ քաղաքացիին կրած դժուարութիւնները: Հաղորդագրութիւնը, որ կը ներկայացնէ Սուրիոյ քաղաքացիին տնտեսական, կենցաղային դժուարութիւններն ու անոնց լուծման միջոցները, պատրաստուած է ներկայ իրավիճակը քննական ակնոցով դիտելու մօտեցումով, ինչպէս նաեւ սերտելով մարդկային եւ նիւթական պաշարներու կարողութիւնները, բնականաբար նկատի ունենալով նաեւ նախորդ շրջանին իրագործուած կամ այդ շրջանէն իրագործելի մնացած ծրագիրները:



Արնուս պարզեց, որ հաղորդագրութիւնը հիմնական եօթը կէտերու վրայ կեդրոնացած է. առաջինը՝ ժողովուրդին ազգային դիմադրողականութեան եւ ընդհ. ապահովութեան ամրագրումն է, երկրորդը՝ քաղաքացիին կենսամակարդակի բարելաւումը, երրորդը՝ սննդամթերքի ապահովումն ու գիներու հաւասարակշռութեան պահպանումը, չորրորդը՝ վառելանիւթի, կազի եւ էլեկտրականութեան ապահովումը, հինգերորդը՝ ըմպելի ջուրի հարցերու լուծումը, վեցերորդը դեղորայքի ապահովումն է, իսկ վերջինը՝ պսակածեւ ժահրի համաճարակէն նախագուշացման պայմաններու բարելաւումը:

- Հինգշաբթի, 24 Սեպտեմբեր 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան նախարարութիւնը ստանձնեց Զինաստանէն հասած բժշկական օժանդակութիւններէն բաժին մը, նկատի ունենալով որ Սուրիոյ մէջ առողջապահական հատուածը վատ պայմաններու մեջ է, տ ն տ ս ա կ ա ն պ ա տ ժ ա մ ի շ ո ճ ն եր ու ն հ տ տ ւ ան ք ո Վ:



Օժանդակութիւնները կ'ընդգրկեն անձնական նախագուշացման սարքեր, ինչպէս նաեւ շնչառական գործիքներ:

- Ուրբաթ, 18 Սեպտեմբեր 2020-ին, ռուսական «Սփութնիկ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Զորքշաբթի, 16 Սեպտեմբերին Անգարայի մէջ ռուսական պատուիրակութիւն մը հանդիպում ունեցած է թրքական կողմին հետ: Հանդիպումի ընթացքին թրքական կողմը Ռուսիայէն պահանջած է Հալէպի արուարձաններէն Մուսայուն եւ Ռաֆաաթ քաղաքները Անգարային յանձնել, սակայն ռուսական կողմը մերժած է թրքական կողմին պահանջը: Աղբիւրը աւելցուց, որ հանդիպումին ընթացքին կողմերը խօսակցի շուրջ համաձայնութեան չեն հասած:



- Զորքշաբթի, 23 Սեպտեմբեր 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, որ պսակածեւ ժահրով վարակուած 44 պարագաներ արձանագրուեցան, 20

Մահացած	Բուժուած	Վարակուած
178	983	3877

վարակակիրներ բուժուեցան, իսկ 3 վարակակիրներ մահացան: Այսպիսով Սուրիոյ մէջ պսակածեւ ժահրով վարակուածներուն թիւը կը հասնի 3877-ի, մահացածներունը՝ 178-ի, իսկ բուժուածներունը՝ 983-ի:

Լուրեր Հայաշխարհին

ՀԱՐՅԵՐՈՒ ԼԱՅՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԶՅԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՀ-Ի ՌԴ ԴԵՄՊՆԱՆԻՆ ՄԻՋԵՒ

22 Սեպտեմբերին Ռուսիոյ դեսպանատան մէջ ՀՀ-ի Բիւրոյի նախագահ Արմեն Ռուստամեան եւ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան հանդիպում ունեցած է ՌԴ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերկէյ Քոպիլոբինի հետ:



Հ ա ն դ ի պ ու մ ի ընթացքին միտքեր փոխանակուած են հայ-ռուսական յարաբերութիւններուն, Հայաստանի ներքաղաքական գարգացումներուն, Հայաստանի եւ Արցախի շուրջ ծաւալող գործընթացներուն, ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու միջնորդական առաքելութեան, մերձաւորարեւելեան տարածաշրջանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բազմաթիւ այլ հարցերու մասին:

ՀՀ-ի Հանրային կապերու գրասենեակ

աշխարհայեացքն ու պատկերացումները: Անկախութեան օրը պէտք է լինի մեր համազգային միասնութեան խորհրդանիշը: Պաշտպանները ու զօրացները մեր Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, որպէս մեր ազգային իղձերի առանցք եւ հիմնասիւն: Խաղաղութիւն ու բարեկեցութիւն մեր Հայրենիքին եւ ժողովրդին: Կեցցե՛ք Հայաստանի Հանրապետութիւնը: Կեցցե՛ք Արցախի Հանրապետութիւնը: Կեցցե՛ք միասնական հայ ժողովուրդը: Կեցցե՛ք Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին: Աստուած պահապան բոլորիս:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա...

Սկիզբ՝ էջ 1 Այսօր, Նորին Սրբութիւնը իր դիմատետրի պաշտօնական էջին մէջ հետեւեալ գրառումը կատարեց. - «Անկախութիւնը Աստուածատուր արժէք է եւ իրաւունք: Անհատի մը կամ ազգի մը անկախութեան իրաւունքը խլել մեղանշում է Աստուծոյ դէմ: Քրիստոս իր արիւնով ազատագրեց մարդը մեղքի ու չարի տիրապետութենէն: Անկախութիւնը որպէս երկնային պարգեւ հարկ է պահել անվթար ու անեղծ: Հայաստանի անկախութեան 29-րդ տարեդարձին նշումը իւրաքանչիւր հայու յիշեցում մըն է ու միաժամանակ հրաւեր հայրենիքի անկախութիւնը աւելի ամրապնդելու եւ գործնապէս մասնակից դառնալու Հայաստանի առաւել հզօրացման աշխատանքներուն»:

ՍՈՒՐԻԱ ԿԸ ԸՆՈՐՀԱԽՐԷ...

Սկիզբ՝ էջ 1 Օսմանեան կայսրութեան ոճիւրներէն մագապուած գաղթական հայերուն եւ անոնց նեցուկ կանգնելու պատրաստակամութիւնը: Հայերը տարիներու ընթացքին դարձան սուրիական հասարակութեան անքակտելի մասնիկը: Իր կարգին Հայաստան պատերազմի դաժան տարիներուն աշակցութիւն ցուցաբերեց Սուրիոյ ժողովուրդին՝ ահաբեկչութեան դէմ իր պատերազմին մէջ: ՀՀ-ի դեսպանատունը շարունակեց իր աշխատանքը եւ չփակեց իր դռները Սուրիոյ մէջ: Յիշենք, որ 13 Փետրուար 2020-ին Սուրիոյ Խորհրդարանը ընդունեց 1915-ին Օսմանեան Կայսրութեան իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը:

ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1 այլեւ ողջ հայութեան համար ունի մեծ նշանակութիւն, որովհետեւ այդ օրով Հայաստանը վերստին յայտնուեցաւ անկախ երկիրներու քարտեզին մէջ: Յակոբ Տեր-Խաչատուրեան հաղորդումի ընթացքին անդրադարձած է նաեւ Հայաստանի ներքաղաքական շարք մը հարցերուն, գործող իշխանութիւններուն հետ յարաբերութիւններուն եւ ՀՀ-ի վարած քաղաքականութեան:

ՆԱԽԱԳԱՆ ԱՐՄԵՆ...

Սկիզբ՝ էջ 1 Դրա համար պէտք է ունենանք յստակ տեսլական, իրականանալի ծրագիր, ինչպէս նաեւ հաստատուն կամք: Ապագան ծնունդ է սրանցից բխող որոշումների ու ջանքերի, մեր մտածողութեան ու գիտակցութեան, մեր աշխատանքի հանրագումարում՝ յենուելով մեր ազգային ու բարոյական արժէքների, մեր պատմութեան, մեր ժառանգութեան վրայ: Միայն իր անցեալն ու աւանդույթները, մշակոյթն ու լեզուն չմոռացող եւ գնահատող, առաջ նայող եւ ժամանակը զգացող անհատը, հասարակութիւնը, ժողովուրդը կարող են գարգացնել ինչպէս իրենց հոգեւոր ու նիւթական, այնպէս էլ իրական եւ վիրթուալ աշխարհը: Որքան էլ աշխարհը փոխուի, նրա հիմքերի հիմքը միշտ լինելու են բարութիւնը, գթասրտութիւնը, արդարութեան ու ճշմարտութեան ձգտումը՝ այն ամենը, ինչի վրայ հիմնուած է մեր ազգային արժեհամակարգը: Մեր եղբայրները եւ քոյրերը՝ զինուոր թէ ազատամարտիկ, բժիշկ թէ մտաւորական, հողագործ թէ գրող Հայաստանից, Արցախից ու սփիւռքից, բոլոր նրանք, որոնք պայքարել, նուիրուել են Հայրենիքին՝ Հայաստանին եւ Արցախին, որոնք գոհուել են յանուն նրա անկախութեան, պատգամում են մեզ բոլորիս՝ ոչինչ չխնայել ներկայի եւ ապագայի համար: Խոնարհուում են նրանց առջեւ: Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր մեր կողքին կրկին նուիրեալներ ունենք, որոնք պահում են մեր մշակոյթի ու գիտութեան, մեր առողջութեան ու կրթութեան սահմանը, որոնք մեր ազգային ինքնութեան եւ արժէքների կրողն ու պաշտպանն են, որոնք իրենց ջանքն են ներդնում հայրենիքի հզօրացման, հայրենի հողի անվտանգութեան համար՝ զինուորականից մինչեւ բուժաշխատող, գիտնականից մինչեւ տեղեկատուական արհեստագիտութեան մասնագետ, հեռաւոր գիւղի ուսուցչից մինչեւ մանկապարտեզի դաստիարակ, ցորեն անցնողից մինչեւ հացթուխ, երաժշտից մինչեւ մարզիկ, նորարարից մինչեւ հնագետ... Հայրենիքի ճակատագիրը կախուած է բոլորիցս ու իւրաքանչիւրիցս, պատասխանատու լինելու, պատասխանատուութիւն ստանձնելու մեր կարողութիւնից, մեր համերաշխութիւնից, միասնութիւնից, միմեանց նկատմամբ մեր բարութիւնից ու հանդուրժողականութիւնից: Պէտք է համախմբուենք: Գործենք միասին՝ որքան էլ տարբեր լինեն մեր մտածելակերպը,

ԲԵՆԻԱՄԻՆ ՊԶԱՔՃԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1 ինչպէս նաեւ խօսած է մայր հայրենիքի մէջ ՀՀ-ի վերահաստատման եւ պետականաշինութեան գործին մէջ ունեցած անուրանալի դերակատարութեան մասին: Չրոյցի ընթացքին Բենիամին Պչաքճեան անդրադարձած է նաեւ Արցախի հիմնահարցին եւ Հայաստանի ներքաղաքական շարք մը հարցերուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Քեօշկերեան եւ Ֆուռունճեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն.
- ՀՍԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան,
- ՀՍԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան եւ Շրջ. Սկ. Խորհուրդին,
- ՀՍԸՄ-ի Սուրիոյ եւ աշխարհասփիւռ մասնաճիւղերու,
- ՍՕԽ-ի Շրջ. Վարչութեան,
- ՍՕԽ-ի «Նայիրի» Մասնաճիւղի Վարչութեան,
- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեծ ընտանիքին,
- Ճինիշեան հաստատութեան,
- Ազգ. Չաւարեան վարժարանի Շրջանաւարտից Միութեան,
- «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրակազմին
- Համազգայինի մեծ ընտանիքին
եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, հեռանձայնի կամ համացանցի միջոցով մասնակից դարձան իրենց հարազատին՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՔՆԱՐ ՔԷՕՇԿԵՐԵԱՆԻ
(Ծնեալ ՖՈՒՌՈՒՆՃԵԱՆ)
մահուան սուգին:
Հանգուցեալին քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Սեպտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Չալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան (ժամը 12:00-ին) ցաւակցութիւնները պիտի ընդունուին ՀՍԸՄ-ի ընտանեկան պարտեզէն ներս (Ազիզի):

ԹՐԱՄՓԻ ԿՈՂՄԱԿԻՑ ՍԵՒԱՄՈՐԹ ԱՍԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻ ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ԿԱՊԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ (Մաս 1)



Յարութ Սասունեան

4 եւ 5 Մեպտեմբեր 2020-ին, Salon.com կայքը հրապարակեց երկու մասէ բաղկացած ծաւալուն բացայայտում մը՝ սեւամորթ ամերիկացիներու խումբի մը մասին, որ փորձած է միջոցներ հայթայթել թրքական գործարքներէն՝ ի պաշտպանութիւն նախագահ Թրամփի վերընտրութեան: Յօդուածներէն մէկը վերնագրուած էր. «Ինչպէ՞ս Թրամփի կողմակից սեւամորթներու խումբը վերածուեցաւ ոչ պաշտօնական թրքական լրախօսական ընտրապայքար իրականացնողի. Salon-ի քննութիւնը կը բացայայտէ պատմութիւնը Թրամփի սեւամորթ աջակիցներուն, որոնք փորձած են օգտագործել թրքական միլիառները», իսկ միւսը՝ «Թրքական իրարանցում. Թրամփի կողմակից սեւամորթներու խումբը ինչպէ՞ս դարձաւ ոչ պաշտօնական լրախօսական խումբ Էրտողանի համար. Թրամփի քարոզարշաւին կապուած կասկածելի ոչ շահութաբեր կազմակերպութիւնը փորձած է կազմակերպել խոշոր ամերիկայի գործարք: Յօդուածները գրած են Ռաճըր Սոլենսթրընը եւ Քեթլին Օ'Նիլ:



Salon.com հաղորդեց, որ «2018-ին Թրամփի կողմակից պաշտօնէտները ոչ ամերիկայի «Քաղաքներու Վերածնունդի Դաշինք» (URC) անունով վիճայարոյց կազմակերպութենէն, որ վերջերս կորսնցուցած էր հարկերէ ազատ կացուցուած բարեսիրական կազմակերպութեան կարգավիճակը եւ այս տարուան սկիզբը յայտնուած թրքերու վերնագիրներուն՝ սեւամորթ ընտրողներուն կասկածելի կանխիկ գումարներ բաժնետիրու համար, նպաստած են ոչ պաշտօնական օտարերկրեայ ազդեցութեան քարոզարշաւին Թուրքիոյ ազդեցիկ մարդոց անունով»:

«URC-ի պաշտօնէտներ Տերըլ Սքաթ եւ Քարիմ Լենիըրը, երկուքն ալ Թրամփի նշանաւոր աջակիցները սեւամորթներու համայնքին մէջ, ըստ բազմաթիւ աղբիւրներու, կազմակերպութիւնը օգտագործած են իբրեւ միջոց «նուիրատուութիւններ հաւաքելու համար», նաեւ՝ Թուրքիոյ հարուստ քաղաքացիներէն: Այս միջնորդութիւններէն մէկ քանին յաջողած են՝ նախկին MAGA (Make America Great Again) համաշխարհային աստղ (թուրք գրող) Ռապիա Քազանի միջոցով», ըստ Salon.com-ի:

Աւելին, «Սքաթի եւ Լենիըրի գործընկեր Պրիս Լեյել, Թրամփի աջակից, Գոնկրեսի նախկին թեկնածու եւ Փոքր Ամերիկայի Ընկերութեան փաստաբան ... իբր թէ կանխիկ դրամ կորցած է Քազանէն, այնուհետեւ խնդրած է անկէ՝ ոչնչացնել գրառումները Թրամփի նախկին փաստաբան Մայքըլ Քոնրոյի տան եւ գրասենեակին, կառավարութեան ստուգման այցերու հաղորդումներէն ետք», հաղորդած է Salon.com:

Սեւամորթ ամերիկացիներու այս ջանքերը նպատակ ունէին ձեւաւորել ամերիկեան քաղաքականութիւն՝ ակնկալելով Միացեալ Նահանգներու մէջ մեծ ներդրում թուրք գործարարներու կողմէ: Ըստ Salon.com-ի՝ «ստորեւ մանրամասնօրէն նկարագրուած այս գործողութիւններէն քանի մը հատը իրաւական լուրջ հարցեր կ'առաջացնեն, ինչպէս՝ հարկերը կարգաւորող կանոններու խախտումները եւ լրախօսական ... օրէնսդրութիւնը», Salon-ի ըսած են փորձագետները: Իրաւաբանները եւ URC-ին ծանօթ մարդիկ Salon-ի յայտնած են, որ հաշուի առնելով այդ գործունեութիւնը, կազմակերպութիւնը, կարծես, իրականացուցած է կեղծ լրախօսական եւ դրամահաւաք գործողութիւն, եւ որպէս միջնորդ հաղորդակցած է ինչպէս Թրամփի վարչակազմի (եւ Թրամփի նախընտրական արշաւի), այնպէս ալ թրքական (Էրտողանի հետ կապուած) շահերու հետ: Ասիկա կը պատմէ այն մասին, թէ երկրորդական խաղացողները, ներառեալ օտարերկրեայ քաղաքացիները, ինչպէ՞ս աշխատած են լրախօսական ... գործունեութեան, քարոզարշաւի եւ օտարերկրեայ գործակալներու օրինական սահմաններու մէջ՝ Թրամփի քառասյին նախագահութեան ժամանակ: Անոնք շփոթած են պաշտօնական եւ ոչ պաշտօնական վարչական պաշտօնները կազմակերպական եւ ընտրական այլ դերակատարումներու հետ եւ գաղտնի պահած՝ միջոցներու աղբիւրն ու օգտագործումը հասարակական եւ պետական ... մարմիններէն, ինչպէս՝ Ներքին Եկամուտներու Ծառայութիւնը (IRS) եւ Դաշնակցային Ընտրական Յանձնախումբը»:

Ամեն բան սկսաւ 2018-ին, երբ «URC-ի պաշտօնէտները առաջին անգամ ֆինանսական օգնութիւն եւ ներդրումներ ապահովեցին թրքական գործարքներէն՝ կապուած Թրամփի վարչակազմին կողմէ ձեռնարկուած տնտեսական նախաձեռնութեան», յայտնած է Salon.com: Թուրք գործարար բանագնացները կ'ապահովէին հանդիպումներ Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ՝ հասնելով մինչեւ Թրամփի պաշտօնէտներուն, Գոնկրեսի հանրապետական ... անդամներուն եւ քարոզարշաւը փոխարինողներուն, որոնցմէ՝ Թամ Պարաք (միլիառատեր եւ Թրամփի մտերիմ ընկերը) եւ Լարա Թրամփ (նախագահին հարսը եւ անոր նախընտրական քարոզարշաւին խորհրդականը)»:

Քանի մը միլիառ տոլար արժողութեամբ այս ծրագիրը նախատեսուած էր ամերիկեան արտադրական շուկան թրքական ընկերութիւններու առջեւ բանալու համար: «Այն փաստը, որ այդ հանդիպումները ակնյայտօրէն ուղղուած էին ԱՄՆ պաշտօնական քաղաքականութեան վրայ ազդելուն, փորձագետներու կարծիքով, հարցեր կը յառաջացնէ, թէ արդեօք ներգրաւուածները պէ՞տք է արձանագրուէին Արդարադատութեան Նախարարութեան մէջ իբրեւ օտարերկրեայ գործակալներ», յայտնած է Salon.com:

«URC-ն յայտնուեցաւ թրքերու վերնագրերուն մէջ, երբ կազմակերպեց քարոզարշաւին նուիրուած ձեռնարկներ՝ կանխիկ գումարներ բաժնետիրու աղքատ համայնքներու սեւամորթ ընտրողներուն, ներառեալ 25 հազար տոլարի խաղարկութիւնը անցեալ տարուան Դեկտեմբերին, որ ինչպէս IRS-ին յայտնած էր կազմակերպութիւնը, տեղի պիտի չունենար: Politico այդ վիճակախաղերը նկարագրած է իբրեւ համաժողովրդական ռազմավարութիւն՝ «սեւամորթներու համայնքներուն մէջ կազմակերպելու համար ձեռնարկներ, ուր անոնք կը փառաբանեն նախագահը՝ հազարաւոր տոլարներ նուիրաբերելով», նշած է Salon.com:

«URC-ի աշխատանքներուն ծանօթ բազմաթիւ մարդիկ յայտնած են Salon-ի, որ պարզ էր՝ Սքաթն ու Լենիըրը հիմնադրած էին կազմակերպութիւնը, որպէսզի ընէին այն, ինչ որ յաճախ կ'ընէին Ռապիա Քազանի, որ թոյլ չէին տար իրենց ընելու Մայքըլ Քոնրոյի քաղաքական ուղղուածութիւն ունեցող նախորդ կազմակերպութեան՝ Ազգային բազմազանութեան դաշինքի միջոցով, որ իրականութեան մէջ, Թրամփի նախընտրական արշաւի լծակներէն մէկն էր, այսինքն՝ դրամ առնել: Փաստաթղթային ապացոյցներ կան, որ URC-ն առնուազն մէկ պարագայի համար մեծ գումարներ որոնած է ստացած է: Ասիկա ստացած է 238 հազար տոլարի դրամական պարգեւ Թրամփի կողմակից աղտոտ դրամներու տեր America First Policies կազմակերպութենէն, որ կապուած է սուփըր PAC America First Action-ի հետ: URC-ն դրամական պարգեւը ստացած է 2018-ին՝ Քազանի ֆինանսական ներդրումներ փնտռելու գծով ուղղորդելէ քանի մը ամիս անց: Սակայն, քանի որ URC-ն երբեք հարկային յայտարարագիր չէ ներկայացուցած, կարելի չէ գիտնալ, թէ խումբը որքա՞ն գումար ստացած է, կամ թէ ինչպէ՞ս ծախսուած է այդ գումարը», գրած է Salon.com:

Թուրք գործարար Ալի Աքաթ, «որ քանի մը անգամ տեսակցած է Սքաթի եւ Լենիըրի հետ, ենթադրաբար քննարկած է բազմամիլիառ գումարի ներդրումներու համապարփակ ծրագիր մը, որ հնարաւորութիւն կ'ընձեռնէր հիմքեր ձեռք բերելու արտադրութեան եւ փաթեթաւորման համար՝ ներդրումներ կատարելով եւ ստեղծելով գործարաններ «Կարելիութեան գօտիներու մէջ», յայտնած է Salon.com: «Այս ծրագիրը պիտի օգտագործէր ամերիկեան սակագիրներու մէջ առկայ բացը: Աքաթ ըսած է թրքական լրատուական միջոցին, որ թրքական ամերիկայի տերերը կրնան խուսափիլ բարձր սակագիրէն՝ կիսաւարտ ապրանքներ արտահանելով Միացեալ Նահանգներ, ուր այդ ապրանքները կը հաւաքուին եւ կը փաթեթաւորուին, բաղձալի է՝ «Կարելիութեան գօտիներու մէջ» գտնուող թրքական ընկերութիւններու կողմէ»:

*Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան*

ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Ազգ. Զարեն Եփփէ Ծննդարանը 2020-2021 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի հետեւեալ պաշտօնէտներուն.

- Դաստիարակի
- Անգլերէնի ուսուցիչի
- Քաղաքացիութեան ուսուցիչի
- Ֆրանսերէնի ուսուցիչի
- Հայերէնի ուսուցիչի
- Մարմնամարզութեան ուսուցչուհիի
- Տնտես մայրիկի:

Ուսուցչութեան համար դիմողները անհրաժեշտ է որ ունենան սուրիական համապատասխան համալսարանական վկայական եւ կրթական ձեռնհասութեան վկայական (թախիլ դարպաւոյի) կամ աշխատանքի փորձառութիւն:

Փափաքողները կրնան ներկայանալ Ծննդարանի տնօրէնութեան ամեն օր, առաւօտեան ժամը 10:00-1:00, բացի Կիրակի օրերէն:

Ազգ. Զարեն Եփփէ Ծննդարանի
Տնօրէնութիւն

Յայտարարութիւն

Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական վարժարանը 2020-2021 տարեշրջանին համար կարիքը ունի տնտես հայրիկի եւ տնտես մայրիկի:

Փափաքողները կրնան դիմել Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական վարժարան կամ հեռաձայնել հետեւեալ թիւին 4659530:

ՀՐԱՇՔՆԵՐ ԵՒ ՏԵՍԻԼՔՆԵՐ



Մանուկ Աբեղայ Պարիխանեան

«Աստուծոյ անհաւատարիմ եւ չար սերունդը նշան կը խնդրի» (Մտ. 16.4)

Ներկայիս շատ են այն անձերը, որոնք կ'ուզեն հրաշք տեսնել, սակայն Զրիստոս ասոնց կը պատասխանէ ըսելով. «Բայց Յովնան մարգարէին նշանն գատ ուրիշ նշան պիտի չտրուի» (Ղկ. 11.29): Որովհետեւ նիւնուեացիները հաւատացին եւ ապաշխարեցան՝ միայն լսելով Յովնան մարգարէին քարոզութիւնը: Ուրեմն հաւատանք, առանց Աստուծմէ ակնկալելու որեւէ բան:



Մեր հաւատքով Զրիստոսի շնորհքին կ'արժանանանք եւ կ'ապրինք ճշմարիտ հրաշքներ, ոչ թէ նախ հրաշք տեսնելով մեր հաւատքը կը գործենք:

Արիւնի, ձեթի, խունկի եւ հրեշտակի յայտնութիւնները կամ նշանները, որոնք ի ցոյց մարդկանց կը կատարուին, միայն քրիստոնէութեան մէջ չեն իրականանար, բոլոր կրօններուն մէջ կը յայտնուին նոյնանման կամ այլ նշաններ:

Սատանան ալ կրնայ նշաններ դրկել: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Չարմանալի ալ չէ, որովհետեւ Սատանան ինքն ալ լուսաւոր հրեշտակի կերպարանքով կը ներկայանայ» (Բ. Կր. 11.14): Աւելին. Սատանան կրնայ երկնքէն կրակ իջեցնել, ինչպէս յիշուած է Յայտնութեան գիրքին մէջ (Յյտ. 13.13):

Ուրեմն չհաւատանք մեր ամեն տեսածին, այլ «Փորձենք զանոնք, գիտնալու համար՝ թէ իրապէս Աստուծոյ հոգիով կը խօսին» (Ա.Յի. 4.1):

Հետեւեալ օրէնքներով կրնանք հաստատել, որ հրաշքը վաւերակա՞ն է թէ ոչ:

Ա.- Պէտք է տեսիլքը կամ հրաշքը համապատասխան Աստուածաշունչին: Աստուած երկու հազար տարի վերջ մեզի նոր պատուեր մը կամ նոր Աւետարան մը պիտի չտայ, ուրեմն որեւէ յայտնութիւն պէտք է անպայման իր նմանը ունենայ Աստուածաշունչին մէջ: Գաղատացիներուն նամակին մէջ գրուած է՝ «Բայց ով որ մեր քարոզածն տարբեր Աւետարան մը քարոզէ ձեզի, ո՛վ որ ըլլայ՝ նոյնիսկ մենք կամ երկնքէն հրեշտակ մը՝ անիծեալ ըլլայ» (1.8): Դժբախտաբար կարգ մը անձեր կ'օգտագործեն Ս. Յոգիին անունը կամ որեւէ սուրբի մը անունը եւ կամ նոյնիսկ Ս. Կոյս Մաիամի անունը՝ նոր պատուեր մը տալու ժողովուրդին, մոլորեցնելով զիրենք:

Բ.- Պէտք է հրաշքը կամ նշանը որ կ'երեւի, նպատակ մը հետապնդէ: Աստուած ինքզինք չի հակասեր՝ իր խօսքերը եւ գործերը միշտ նոյնն են: Որովհետեւ Աստուած ցուցադրական տեսարաններ (ձեթ, խունկ, արին, պատկեր շարժել)՝ չի սարքեր, պարզապէս ժողովուրդը կը հաւատայ նման պատկերներու: Ուրեմն երբ Աստուած մեկու մը տեսիլքի պիտի արժանացնէ կամ հրաշքի պահ մը պիտի ապրեցնէ, ինքնաբերաբար նպատակ մը պէտք է հետապնդէ՝ Զրիստոսը քարոզելու (Մտ. 16.15) եւ փրկութեան ծրագիրը ի գործ դնելու:

Գ.- Փոփոխութիւն կրել: Երբ որեւէ անձ տեսիլք ունենայ, պէտք է իր կեանքին մէջ արմատական փոփոխութիւն յառաջացնէ: Սողոսը զինուորական մըն էր, քրիստոնէայ հալածող եւ սպանող, երբ Յիսուս երեւեցաւ Սողոսին, ամբողջ կեանքը փոխուեցաւ, դարձաւ մեծ քարոզիչ Զրիստոսի եկեղեցիին եւ կոչուեցաւ Սրբազան Պօղոս Առաքեալ: Փոփոխութիւնը ժամանակաւոր պէտք չէ ըլլայ, այլ յաւիտեանական եւ փրկութեան ձգտող: Օրինակ՝ երբ Կենարար Ս. Յոգի մեկու մը մէջ հանգչի, նպատակ մը պէտք է հետապնդէ, ոչ թէ պարզապէս տապալակի, ուժաթափ ըլլայ, այլ նուազագոյնը լեցուի Ս. Յոգիին պտուղներով (Գղ. 5.22):

Դ.- Հրաշքը կամ տեսիլքը Աստուծոյ փառքին պէտք է ծառայեն: Որեւէ հրաշք կամ նշան պէտք չէ բացարձակապէս վերագրել Սուրբերու: Որովհետեւ գրուած է. «Ինչ որ իմ անունով խնդրէ՛ք՝ պիտի կատարեմ զայն, որպէսզի Հայրը փառաւորուի Որդիով» (Յի. 14.13): Ուրեմն որեւէ հրաշք Յիսուսի վերաբերեցն է Աստուծոյ փառք տանք, ոչ թէ որեւէ սուրբի եւ կամ նոյնիսկ Աստուծամօր, որպէսզի մեր անհաւատութեան եւ տգիտութեան պատճառով պատիժի չենթարկուինք: Փառքը միայն Աստուծոյ է: Տասը բորոտներէն միայն մէկ հոգին բժշկուեցաւ, որովհետեւ Զրիստոսի վերադարձաւ, շնորհակալութիւն յայտնելով փառք տուաւ Աստուծոյ, այս պատճառով միայն ինք փրկուեցաւ (Ղկ. 17.11-19):

Ե.- Տեսիլքին կամ պատգամին հետեւանքը կամ արդիւնքը: Երբ տեսիլք մը կ'ունենանք կամ կը լսենք մեկու մը տեսիլքին մասին, ուշադրութիւն պէտք է ընենք, թէ ինչ է պահանջը մեզմէ կամ խնդրոյ առարկայ անձէն, արդեօ՞ք ան Աւետարանին դէմ է: Ներկայիս տարածուած գտած են Ս. Մարիամի անունով տեսիլքներ աշխարհին մէջ, ինչպէս՝ Մետիկորիէն (medjugorje) կամ Ֆաթիման (fatima): Այսպիսի տեսիլքներ բացարձակապէս Աստուծային տեսիլքներ չեն, այլ՝ սատանայական միջամտութեամբ կը կատարուին: Որովհետեւ Ս. Կոյս Մարիամ խնարհութեան ու սրբութեան խորհրդանշան է, չէ ըսած եւ ոչ ալ կ'ըսէ որ ձեր սրտերը ինծի նուիրաբերեցէք եւ կամ ինծի աղօթքներ մատուցեցէք: Մենք պէտք չէ Աստուծմէ գատ ուրիշին աղօթենք կամ պաշտենք: Ներկայիս մարդիկ ուրիշ սուրբերու նուիրուած տաճարներուն մէջ ծունկի կու գան, անոնցմէ կը խնդրեն ամեն բան, կարծելով որ անոնք են կեանքին փրկիչը, մոռնալով որ մենք Զրիստոսի

ՆՇԱՐ

ՓՈՔՐԻԿ ԿԻՊՐՈՍԻ ՄԵԾ ՓՈԹՈՐԻԿԸ



Ս. Մահսերեմեան

Այն օրը, երբ Հայաստան ու անոր հետ ամբողջ հայութիւնը անխառն հպարտութեամբ կը տօնէին մեր հայրենքի վերանկախացման 29-րդ տարեդարձը, անդին, փոքրիկ Կիպրոսը մեծ փոքրիկ ստեղծեց Եւրոպայի Միութեան արտաքին գործոց նախարարներու ժողովին, վերջոյ դնելով Պելոնուսիոյ շուրջ 40 իշխանաւորներու դէմ՝ պատժամիջոցներ որդեգրելու բանաձեւին, յայտարարելով, որ նման քայլերու մէջ, Եւրոպական համայնքը պէտք է ըլլայ հետեւողական եւ պատժամիջոցներ որդեգրէ նաեւ Թուրքիոյ դէմ, նկատի ունենալով Միջերկրականի արեւելեան գօտիին մէջ անոր շահատակութիւններն ու ոտնձգութիւնները: Կիպրոս, 18 Յուլիսին, թուրք պաշտօնատարներու դէմ պատժամիջոցներ որդեգրելու բանաձեւ մը ներկայացուցած է Եւրոպական Միութեան, սակայն մնացած է անպատասխան:

Կիպրոսի բնակչութիւնը Եւրոպական Միութեան երկիրներու ընդհանուր բնակչութեան հազիւ 0.2 առ հարիւրը կը կազմէ. այս միութեան օրէնքներով, նման բանաձեւ չի կրնար որդեգրուիլ, եթէ միաձայնութիւն չգոյանայ: Եւ ահա, պոլիկ Կիպրոսը, որ կ'ըսէ, թէ Լուկաշենքոյի եւ անոր գործակիցներուն դէմ պատժամիջոցներու գաղափարին դէմ չէ, Կիպրոսը՝ որ բարեկամական կապեր ունի Լուկաշենքոյի թիկունքին կանգնող Ռուսիոյ հետ, եւ սա այն Ռուսիան է, որուն հետ Թուրքիա կը ձեւացնէ բարեկամութիւն եւ մերձաւորութիւն խաղալ՝ ի հեճուկս ՆԱԹՕ-ի իր դաշնակիցներուն (անոնք ալ կը կլլեն թրքական շահատակութիւնները), ահա այս պոլիկ Կիպրոսը սեղանը կը շրջէ, բոլոր հաշիւները տակն ու վրայ կ'ընէ նոյնիսկ Եւրոպական Համայնքի ՕՐԵՆՔին ուժով, իր դաշնակիցներուն յիշեցնելով, որ հոն, իրենց քթին տակ կայ օրէնք ու միջազգային սահմաններ ոտնակոխող երկիր մը՝ Երտողանի Թուրքիան, որուն հանդէպ կրաւորականութիւնը հանդուրժելի չէ:

Միջազգային լրատու-քարոզչական աղբիւնները մեղադրական



արտայայտութիւններով դիմաւորեցին Կիպրոսի այս կեցուածքը, ԵՄ-ի անդամները մեղադրանքներ շռայլեցին Կիպրոսի հասցէին, մինչեւ իսկ մոռցան որ նոյնիսկ Թուրքիա մօտաւորապէս կէս դարէ ի վեր գրաւման տակ կը պահէ Կիպրոսի հիւսիսային գօտին, իսկ անոր կարգ մը անդամները հիմա Թուրքիոյ

դէմ «տաքցած են», որովհետեւ... քարիւղի-կազի հանքերու պատմութիւն մը փայլատակած է Սեւ ծովուն ու Միջերկրականի կիպրամերձ գօտիին մէջ (չմոռնանք փոքր Լիբանանն ալ, որ ԵՄ անդամ չէ):

Հարցը անպայման հոն չէ, թէ Լուկաշենքօ մը արդա՞րօրէն վերընտրուած է, թէ Արեւմտեցի միաձայն գորակցութիւնը վայելող անոր մրցակիցը՝ Սվեթլանա Ռիխարտովնայա իրաւացի է, երբ կը հաւաստէ, թէ ընտրական կեղծիք տեղի ունեցած է եւ Փութինի դաշնակից Լուկաշենքօն պէտք է տեղի տայ, եւ նոր ընտրութիւններ կազմակերպուին: Հարցը հոն է, որ Կիպրոսի արտաքին գործոց նախարարը՝ Նիքոս Խրիստոտուլիս, դիւանագիտութեան զենքը ճիշդ ատենին եւ հատու ձեւով ի գործ դրալ՝ ի խնդիր Թուրքիոյ դէմ իր երկրի շահերուն եւ իրաւունքին պաշտպանութեան, ձեւով մը ծունկի բերելով Եւրոպացի դաշնակիցներու ամբողջ ընտանիքը (անշուշտ շշուկներ կան, թէ ԵՄ կարգ մը անդամներ ալ համաձայն են Կիպրոսի, չեն ցանկար նման խզողական քայլերու դիմել Պելոնուսիոյ, հետեւաբար նաեւ՝ անոր ետին կանգնող Ռուսիոյ դէմ, սակայն այդ մասին բարձրաձայնող չկայ առայժմ): Կիպրոսի ամենէն բիրտ քննադատները եղան Լաթիփա եւ Զիթուանիա, որոնք ըսին, թէ այս վեթոյով, Նիկոսիա քաջալեր կը հանդիսանայ ժողովրդավարութեան ոտնակոխման:

Իսկ ո՞վ կը յիշէ ու պիտի յիշեցնէ Թուրքիոյ ՊԵՏՌՈՒՄԻԱ հետեւողական քաղաքականութիւնը, որ կը կիրարկուի միջազգային օրէնքի, մարդկային իրաւունքներու, աշխարհակալական ձգտումներու հետապնդման, ոճրագործ ահաբեկիչներուն գօրակցութեան եւ, մէկ խօսքով՝ քաղաքակրթութեան ու մաշկոյթի բռնաբարման խորագիրներուն տակ: Կիպրոսի այս քայլը պարզապէս նորագոյն ահազանգ մըն է, ուղղուած՝ Եւրոպային ու ամբողջ աշխարհին:

Ի դէպ, Կիպրոսի այս կեցուածքը անակնկալ չէր: Նիկոսիա անցեալ շաբաթ յայտարարած էր, որ վերջօ պիտի դնէ, եթէ թուրքեր եւս պատժամիջոցներու ենթարկելու իր առաջարկը անտեսուի: Վաղը, 12 Հոկտեմբերին, Եւրոպայի նոյն նախարարները դարձեալ ժողովի պիտի նստին, մինչ այդ՝ պիտի փորձեն տարհամոզել Կիպրոսը, սակայն կարելի չէ, պէտք չէ՛ անտեսեն ու փակ-ականջ մնան այս ահազանգին դիմաց: «Հետեւողական եղէք», կ'ըսէ անոնց Կիպրոս, այսինքն՝ հրաժարեցէք երկու չափ-երկու կշիռի սնանկացնող ընթացքէն:

արեան գինն ենք:

Ուրեմն, որեւէ տեսիլքի կամ նշանի մասին որ կը լսենք, կամ կը տեսնենք, պէտք է կիրարկենք այս 5 կետերը ամբողջութեամբ, այսինքն պէտք է 5 կետերը յարմարին մեր տեսածին, առանց բացառութեան, որպէսզի հրաշքը հարագատ ըլլայ Աստուծային ճշմարտութեան: Հաւատանք Զրիստոսի առանց հրաշք ակնկալելու, ինչպէս նիւնուեացիները հաւատացին: Այդպիսով է, որ Աստուած կը ողորմի մեզի եւ մենք կ'արդարանանք Զրիստոսով:

ԴԱՄԱԸԱԿԱՆ ԸՆԿՐ. ԷՄՄԱ ԱՉԱՐԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ, ԸՆԹԵՐՑՈՒՄԾ՝ ԸՆԿՐ. ՅՈՒԹ ԿԱՆԱԵԱՆԻ ԿՈՂՄԵ ՅԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԵԾ ԿՈՐՈՒՄՏԸ

Դժուար է հրաժեշտի խօսք արտասանել համազգայնական մեծարժեք ընկերուհիի մը մահուան առիթով:

Դժուար է եւ տխրալի հետեւիլ թաղմանական արարողութեան, որուն ընթացքին կը լսուի «Ի Վերին Երուսաղէմ»ը:

Դժուար է յատկապէս, երբ վերջերս հողին յաջորդաբար կը յանձնեցինք մարմինները մեր նուիրական, բազմաշնորհ եւ վաստակաշատ համազգայնականներուն, որոնք իրենց կեանքի տելոլութեան սատարեցին մեր գոյատեւման ու մղիչ ուժ հանդիսացան յաջորդող սերունդներուն:

Անոնց մէջէն երիցագոյնը ընկի. Էմման էր, որ այսօր յաւիտենապէս կը բաժնուի իր հարազատներէն, ընկեր-ընկերուհիներէն, հազարաւոր աշակերտ-աշակերտուհիներէն եւ իր պաշտած համազգայինէն, որուն անդամներուն բժախնդիր եւ գործնական խորհրդատուն էր:



Առանց չափազանցութեան կրնանք ըսել, որ չկայ համազգայնական մը, որ ծառայած ըլլայ այս միութեան, այնպէս ինչպէս ծառայած է ընկի. Էմման, երբեմն սեւ ու երբեմն ալ ինքնամոռաց աշխատանք տանելով, ինչ որ ոչինչ պակսեցուց իր համազգայնականի արժանիքէն, այլ բնորոշեց միութենականի իր ինքնամոռաց նուիրումի հանգամանքը:

Կրթական մշակ, Սուրիահայ Օգնութեան Խաչի եւ Յամազգայինի երկարատեւ անդամ ընկերուհին եղաւ հաւատարմորդ աստիարակ, գործիչ, յօդուածագիր, թղթակից եւ թարգմանական գրականութեան նուիրեալ մը:

Իր ծառայութեան հետքերը կը տեսնենք ամէնուր, սկսեալ Ազգ. Յայկազեան Վարժարանէն մինչեւ Յալէպահայ բեմերուն վրայ եւ յաճախ քուլիսներու ետին, մշակութային ծառայութեան վառ օրինակ հանդիսանալով:

Յամազգայինի իւրաքանչիւր ժողովի աւարտին տուն վերադառնալով, ընկի. Էմման անպայման պետք էր գրի առնէր ժողովին ատենագրութիւնը եւ առաւօտուն յանձնէր գործավարուհիին, իսկ ձեռնարկներու թղթակցութիւնը իր գրական ոճով՝ «Գանձնասար» պաշտօնաթերթին:

Երեւոյթ մըն էր Էմման. աշխատանքի մարտահրաւերներու հերոսուհի մը, բացառիկ ներկայութիւն մը կրթական, մշակութային, ազգային, միութենական թէ ընկերային կեանքէն ներս:

Անոր աշխատելաճոճ օրինակ պետք է հանդիսանայ միութենականներուս, որպէսզի արդիւնաւետ ըլլան մեր մշակած ծրագիրները:



Ակնարկ մը նետելով ընկերուհիին կեանքի փուլերուն վրայ, կրնանք հաստատել, որ անոր նպատակակէտը եղաւ յանձնառութիւնը եւ պատասխանատուութիւնը յանուն ազգային եւ հաւաքական մեր կեանքին սպասարկութեան, դառնալով իտեալ համազգայնական մը իր

գիտակից ծառայութեամբ եւ յաւերժ ներկայութեամբ:

Եթէ պրպտենք Յամազգայինի թղթածրարները, հոն պիտի գտնենք Էմման իր գեղեցիկ ձեռագիրով, օրինակելի գեղեցիկ աշխատանքով: Ան երբեք խնդրոյ առակայ չդարձուց իր անձը ու երբեք իրեն չվերագրեց միութեան արձանագրած նուաճումները, ընդհակառակը՝ գանոնք նկատեց մեր հաւաքական ճիգին արդիւնքը:

Յամազգայինի տարեգրութեան մէջ անպայման ոսկի տառերով պիտի արձանագրուի Էմմային անունը, գլխագիր անունը, որ եղաւ ողնաշարը նախ Յամազգայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղին, ապա Շրջանային Վարչութեան:

Եղաւ դաստիարակ եւ հայերէն լեզուի դասատու: Պաշտամունքի աստիճան սիրեց Յամազգայինը եւ գործեց լուռ ու անշուք, իսկ աչքերը փակեց նոյն լուրթեամբ:

Սիրելի՛ Էմմա, քու հրաժեշտովդ Յամազգայինը կը կորսնցնէ քառասուն երկար տարիներու հաւատարմորդ նուիրալ միութենական մը:

Կը խոնարհիկը յիշատակիդ առջեւ, շեշտելով որ անհրաժեշտ էր վաստակդ գաղութիս ուշադրութեան արժանացնել համապատասխան շքանշանով մը:

Յիշատակդ անթառամ մնայ, սիրելի՛ Էմմա:
Յամազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՂՅՐԻԿ ՅՈՒՇԵՐ

Փոքր տարիքեւ գմայլած եմ քոյրերուն հանդէպ հօրս տածած սիրոյն: Կանուխ տարիքէն իր ծնողքը կորսնցուցած ըլլալով, հօրենական պարտաւորութիւն մը զգալով ան ջանք չէր խնայեր ուրախ պահելու զանոնք:

Խարբերոցի հայրենասէր ընտանիքիս նախնիները միշտ յատուկ սեր եւ յարգանք տածած են իրենց հօրաքրոջ՝ Փայլունիին: Ան իր եղբօր՝ մեծ հօրս՝ Խաչատուրին հետ միասին խարբերոյէն Տեր Զօրի անապատներէն քալելով հասած էին Յալէպ: Միասին ապրելով, մեծ հայրս ընտանիք ու զաւակներ ունենալով մէկտեղ միշտ քրոջը թելադրանքները յարգած էր: Յօրս հօրաքրոյրը յայտնի օրիորդ մը եղած էր Խարբերոցի մէջ, իր բարեկամներուն վկայութեամբ՝ խելացի ու ընթերցասէր: Ան տարիներ շարունակ մնաց եղբօր շատ սիրելի զաւակներուն կողքին: Տարիներ ետք, երբ հայրս ալ կ'ամուսնանայ, անոնք առջինեկ իրենց զաւակը՝ գիս, կ'անուանեն Բալիկ, ի յիշատակ իրենց հօրաքրոջ: Այսպիսի անբացատրելի սիրով հայրս մեր մէջ ալ նոյն սերն ու յարգանքը սերմանեց մեր հօրաքրոյներուն հանդէպ, ոչ մէկ օր զանոնք առանձին ձգելով:



Անուշ յուշերս սկիզբ կ'առնեն այն օրերէն, երբ կը յաճախէիք Ազգ. Յայկազեան վարժարանի նախակրթարան: Երբեմն մեր տան հեռաւորութեան պատճառով կ'ուշանայինք դպրոց հասնելու, հօրաքրոյս, որ սովորաբար իր դասապահը սկսելէն առաջ, աղօթքի ժամն իսկ երբեմն չհասած, արդէն իսկ գրատախտակին վրայ գրած կ'ըլլար օրուան քերականութեան բոլոր վարժութիւնները, իսկոյն երեք Անթելի հրապարակ կ'ուղղուէր ու այնտեղի արձանին քով, մտահոգ կանգնած մեզի կը սպասէր:

Զբօսանքներուն մեզ կ'առաջնորդէր իր 2-րդ տունը՝ Յամազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութեան սենեակը, ուր նախապէս Ազգ. Յայկազեանի մանկապարտէզն էր: Յոն, իր ժողովասենեակին մէջ, կը զբաղէր ատենագրութիւնները մեքենագրելով, իսկ մեզ կը զբաղցնէր քերականական վարժութիւններ տալով:

Արձակուելու պահուն, իր կողմէ ճշդուած աշխատասէր իր աշակերտուհիներուն հետ մեզ կ'ուղարկէր Յոգետուն, ուր հայրս մեզ պիտի ստանձնէր ու տուն տանէր: Այդ աշակերտուհիներէն կը յիշեմ Թալին Յարութիւնեանը, որ այնքան երախտապարտ է նման ուսուցչուհի մը ունեցած ըլլալուն համար եւ ինք եւս Միացեալ Նահանգներու մէջ նոյն ասպարէզին կը ծառայէ:

Ինչեւէ, երբեմն հայրս մեզ կը տանէր հօրաքրոջս տունը, հօրաքրոջս սրբագրելիք ուղղագրութեան եւ շարադրութեան տետրակներով բեռնաւորուած կը բարձրանայինք աստիճաններէն, մտածելով որ ամէն օր ինչպէ՛ս առանց դժգոհանքի 4 յարկ կը բարձրանայ:

Երեկոյեան մեզ «Մերոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբի փորձերուն կը տանէր, ճամբու ընթացքին սովորուով տուրմ կ'առնէր: Անոր անուշ բոյրը կարծեք մինչեւ հիմա ռունգերուս մէջ կը համենայ: Նոյն ճամբուն վրան էր Գարագաշեանին խանութը, ուրկէ համեմներ կը գնէր, իսկ վերադարձին, բուրդի շուկայէն դէպի Թիլէ կը հանդիպէիք գրատուն «Քասար»ին, գրենական մեր պիտոյքը առնելու: Այդ պահուն հօրաքրոյս միշտ իր նրբիկ ձայնով ֆրանսերէն կը խօսէր արաբերէնի փոխարէն, վաճառողը մեծ հաճոյքով մտիկ կ'ընէր: Զիչ մը անդին կոճակ ծախող «Զերպէ»ի խանութայինին հետ ալ ֆրանսերէնով կը զրուցէր:

Կը յիշեմ յատկապէս այն Շաբաթ օրերը, երբ եղբայրներուս հետ իրենց տունը կը գիշերէիք, որպէսզի յաջորդ առաւօտ կանուխ արժուիկութեան-գայլիկութեան երթայինք: Յօրաքրոյս մեծ հաճոյքով պատշգամը լուալէ ետք, քնանալու մեր իրերը կը տեղաւորէր այնտեղ ու գով օդին, Յալէպի բերդին լոյսերը դիտելով եւ երեք Անթելի ժամացոյցին ձայնը լսելով կը քնանայինք:

Առաւօտ կանուխ ծիծեռնակներուն ձայնը կ'արնթնցնէր մեզ եւ սիրելի Ս. Քառասնից Մանկաց եկեղեցւոյ գանգին ողջանքը Կիրակիին գալուստը կ'աւետէր: Յիանալի օրեր էին, հօրաքրոյս ամբողջ գիշերը իր հրաշալի ձեռագիրով կը գրէր Յամազգայինի ժողովներու ատենագրութիւնները: Ընդհանուր ժողովներէն առաջ օրեր կ'անցընէր առանց քնանալու՝ գործունէութեան տեղեկագիրը պատրաստելու համար, իսկ առաւօտեան դպրոց կ'երթար կրկին առանց քնացած ըլլալու:

Կը յիշեմ նաեւ Ազգ. Յայկազեան վարժարանի ամավերջի հանդէսներուն պատրաստութեան ընթացքին արտասանութեան փորձերը, որոնք կը կազմակերպէր բեմադրիչ պրն. Գրիգոր Զելէշի եւ ընկ. Մովսէս Ֆաքճեանի հետ:

Բալիկ Ազարիկեան-Կոստիկեան
Միացեալ Նահանգներ
Յիսթրն-Թեքսաս
(շարունակելի)

Ռուբեն Սեւակ-135 (Ե.)




Լայա Միսկարեան-Մինասեան

Հայրենի Զար

Ինչպես նշուեցաւ, Հայրենիքի արիւնահոսող վերքը չէր կրնար հայ բանաստեղծը չմղել իր հիմնական պարտքին՝ իր ազգի ոգին արթնցնելու, գայն գաղափարապէս սնելու եւ անոր ձեռքը ինքնապաշտպանութեան սուրը դնելու: Եւ ինչպէս Սիամանթոյի պարագային՝ Սեւակէն եւս հայրուկը մարտակոչ-քերթուածներ կը պահանջէ:

Ձուրին տուր հիւանդ սրինգդ եղգ, Սիրել, երգել, լալ, լացընել աղէկ, Սակայն լաւագոյն կեանքն է արի, Թող դողդոջուն ձեռքդ սուրին փարի...

Քնարական նկարագրի՝ սիրոյ ու գեղեցիկի երգիչ Սեւակ հայոց կոտորածներու, աւերի տեսարաններէն խորապէս խոցուած՝ կը դառնայ շարդի սոսկալի պատկերներու, նաեւ՝ ընդվզումի ու պայքարի երգիչ: Տարդի ամենէն սոսկալի նկարագրութիւններ կը տեսնենք անոր քերթուածներուն մէջ: Բանաստեղծը հոգեկան բարդ տուայտանքներէ կ'անցնի: Երբեմն անոր կը թուի, թէ կը մեռնի դարերով հայը հայ պահած ազգային ոգին, անհետացումի վտանգին առջեւ է ազգը, ողջ մնացողներն ալ մագապուած կը գաղթեն այլ երկիրներ ու անոնց հեռանալուն հետ «կը մեռնի դարեր, դարերով անշէջ Մեր Նահապետը»-այսինքն՝ Հայաստանը «Նահապետը»:



Նոյն մտահոգութիւնը խորապէս կը տառապեցնէր Վահան Տերեան, որ տագնապով կը հարցնէր՝ «Մա՞հն է արդեօք, թէ՞ նինջը քեզ պատել, պայծա՞ռ Նայիրի»: Նուարդ Թումանեանին գրած նամակին մէջ ան կ'ընէր. «Մեր հայրենիքի ցաւը մեզ այնպէս է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիւանդագին սեր է, դա մի անյարդթիլ մոլութիւն է»:

Այլամայ այդ «մոլութեան» մէջ յայտնուած արեւմտահայ քերթողներու՝ Սիամանթոյի, Վարուժանի կարգին կը դասուի նաեւ Ռուբեն Սեւակ՝ իր «Կարմիր Գիրքը», «Կիլիկեան Երգեր» շարքերով ու այլ բազմաթիւ քերթուածներով:

Յատկանշական է «Ձարդի Խենթը» վիպերգը: Ձարդերու մէջէն անցնող Խենթը ուսին կը կրէ իր մեռած հոր դիակը (հին ստրկամիտ մտայնութեան խորհրդանշան), գոր, ի վերջոյ, բարկացած՝ գետը կը նետէ ու կ'անդրադառնայ, թէ «դրախտ երթալու կարճաժամ ճամբան խենջարն է քիւրտին»: Հետաքրքրական է, որ Խենթին անցած ճամբան կը նմանի Ռաֆֆի Սահրատի «Ձալալադդին»-ի ուղիին: Ան ալ հոր հնազանդութենէն ըմբոստացած՝ հեռացած է ու ապա վերադարձին տան շեմին գտած է վիրաւոր, մահամերձ հայրը: Երկու զաւակներուն ալ եզրակացութիւնը նոյնն է՝ ստացաք ձեր ստրկային հնազանդութեան հետեւանքը: Այլաբանական պատկերով մը Սեւակ մեղադրական խօսք կ'ուղղէ «ծանծաղ ուղեղով» «ազգին խելօքներուն», որոնք ամբարտաւան են ու անտարբեր իրենց ենթականերու տառապանքին ու քծնող, ստրկամիտ՝ ազգը կոտորող իրենց տերերուն առջեւ: Կարեւորը իրենց եկամուտի աղբիւրները պահպանելն է:

Տամուկեան սուրի մը տակ դող ի դող՝ Շտեմարանին կ'ուռնեն գոհ...

Այլամայ կը յիշես Ռուբեն Չարդարեանի «Շուն մըն ալ պակաս» պատմութեան հերոսը՝ եպիսկոպոսը կամ Արփիար Արփիարեանի «Կարմիր Ժամուց»-ին Հայրապետ Էֆենտին: Բարձր խաւի նոյն անտարբերութիւնը ժողովուրդի տառապանքին հանդէպ, միայն իրենց շահերուն հետամուտ՝ քիւրտ ու թուրք իշխանաւորներուն հետ բարեկամութիւններ հաստատելը:

Հայրենիքէն հեռու ապրող բանաստեղծը կը հաւատայ իր ժողովուրդի ոգին, արիւթեան ու կը մեղադրէ պոլսական թերթերը, որոնք փոխանակ վրէժի ու պայքարի մղելու ժողովուրդը, «յուսահատեցուցիչ, ծայրայեղօրէն յոռետես, ջլատ, տրտում դամբանականներ» կը գրեն: Ըստ Սեւակի, անոնք պետք է կամ պոռթկան ու կամ լռեն:

Հայրենիքի ցաւին տառապանքը երբեմն ալ յուսահատութեան կը տանի Սեւակը եւ ինչպէս որ շարդի ու պայքարի անկրկնելի բանաստեղծը՝ Սիամանթո, Սեւակ եւս յուսահատութենէն դէպի դառն խորհրդածութեան կ'երթայ: «Ո՛վ Իմ Հայրենիքս» խօսուն խորագիրով քերթուածին մէջ բանաստեղծը Չուիցերիա, Լեմանի ափին քալելով՝ իր հեռաւոր հայրենիքին ցաւով կ'ապրի: Նկարագրելով Չուիցերիոյ բնութեան հրաշալիքները, խաղաղ գեղեցկութիւնները, ապա իր հայրենիքին դառնալով՝ կը փնտռէ անոր ալ խաղաղ ու լի օրերուն «հովուերգութիւնները սփարալի», կը յիշէ «Արարատեան ձիւնափառ հսկան», «Եփրատ ու Արաքս ու Վանայ ծովակ», ու ներկան՝

Ով դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի, Որ արիւնի տա՛ք շամանդադի մէջ,

Չոհ՝ գազաններու խաղին վայրենի, Ու համայնասպա՛ռ բոցերու անշէջ, Կը մխա՛ս, դժբա՛խտ երկիր հայրենի...

Թումանեան «Հայրենիքիս Հետ» քերթուածին մէջ կը հաստատէ, թէ «...պօետներ, որ չեն պղծել իրենց շուրթերը անծքով...», սակայն բանաստեղծի խօսքը բառացիօրէն պետք չէ ընկալել: Երբ ցաւը անընդգրկելի, մարդու ուժերէն վեր չափերու կը հասնի, երբ բանաստեղծը հայրենիքի կորուստին սարսափը կ'ապրի, երբ անգոր կը դառնայ ամեն բան՝ նկարագրելու համար թշնամիին ճիւղալային բնոյթը, բանաստեղծին այլ բան չի մնար, քան նգովելը: Այսպէս է Սիամանթոյի քով, այսպէս է որ Սեւակին հերոսները կ'աղաղակեն:

Թո՛յն շնչէիք դուք, ու ըմպէիք մահ... Գո՛ւ, նոգ՛վք, նոգ՛վք, ձեր սերունդներուն...

Բանաստեղծը գիտէ, որ տկար «գէնք» է անծքը ու կ'աւարտէ ցաւով, նաեւ՝ իր անգորութեան ինքնամեղադրանքով: «Չառամած» է իր քնարին թելը, քանի որ անմասնակից հայրենի ժողովուրդի տառապանքին, օտար երկրի գեղեցկութիւնները կ'երգէ, փոխանակ իր ազգին համար վրէժի ու պայքարի մարտակոչ հնչեցնելու:

Քնարի գառամա՛ծ թելի մը փարած, Թալանէ՛, բոցէ՛, ա՛հ, հեռու, հեռո՛ւ, Զալէ՛, դուն, քերթող հայրենահալած, Գո՛ւր, արի՛ւն երգէ ազատ լեռներու, Քնարի գառամա՛ծ թելի մը փարած...

Ու ապա՝ ցաւած ու անգոր մարդուն ընդհանրական հարցումը՝ «Բաբէ՛, ...կեանքն է այս, քալէ՛ կուրօրէն»:

Ցաւէն՝ յուսահատութիւն, գայրոյթէն՝ ընդվզում ու վրէժի կոչ, բոլոր տրամադրութիւններէն կ'անցնի բանաստեղծը: «Կիլիկեան երգեր»-ու «Վերջին օրօր» քերթուածին մէջ, թուրքին ետաթաղանէն մեռնող մայրը մանկան կ'ընէ, որ անոր վիրաւոր հոր մարմնին առջեւ ինք ուխտած է «...Հռոմի եգ գայլին պէս նոր Ռոմուլոս մը դիեցնել ստիւնքէս»: Ու ապա կու տայ վերջին պատգամը, որ նոյն ատեն բանաստեղծի ակնկալիքն է հայ մայրերէն՝

Ահա կ'իյնամ... Հայրենիքը մա՛յր քեզի, Կտակ կու տամ այս կոտորած սուրն երկսայրի՛ Ուր հայրիկիդ դէռ տաք արիւնը կ'այրի... Օրօր ըսեմ՝ քնանաս...

Սեւակ յաճախ կը դիմէ Աստուծոյ՝ թէ՛ երկրի վրայ տեղի ունեցող անարդարութիւններուն եւ թէ՛ հայոց ճակատագրին առնչութեամբ: Աստուած իր պարագային կը նոյնանայ համամարդկային մեծ արդարութեան գաղափարին: Կիլիկեան շարդերու արծագանգ «Չանգակներ, գանգակներ» քերթուածին մէջ, Սեւակ կը խօսի Հայոց Եկեղեցւոյ գանգակներուն հետ, որոնց վրայ «կեղեւ պատեց աղօթքի փոշին», սակայն դարեր շարունակ մեր աղօթքներուն փոխան դիտեցին, թէ ինչպէս՝

Որք, կին, ծերունի, բոցերով անշէջ, Իրենց Աստծոյն գահին զոհուեցան: Ու բնականօրէն կը հնչէ հարցումը՝ Արդ ո՛ւր էք, չքնաղ խոստումներ խաչին, Եղբայրութեան զուր բարբառներ, ո՛ւր էք...

Նշելով, որ հեռու է արդարութեան օրը, ան կ'եզրակացնէ՝ եթէ նորածին գառնուկը ապրիլ կ'ուզէ՛ պետք է «ակռան սրէ լռելեայն»: Ապա, ի վերջոյ, կը պոռթկայ արդարութիւն փնտռող բանաստեղծին ընդվզում-մարտակոչը:

...Գոռացք, գանգեր, ու կատաղօրէն Գահավիժեցէք ձեր երկաթ թառէն, Ուրկէ միայն լալ գիտցաք դարերով...

Տարդի օրերուն «Ազդակ» շաբաթաթերթի խմբագրութեան ուղղած նամակի մը մէջ («Ազդակ», 1909, թիւ 23) Սեւակ կը գրէ, որ գուլիցերական թերթի մը մէջ կարդացեր է իրենց ճակատագրին հնազանդօրէն ենթարկուող հայերու մասին հեզնական յօդուած մը, ուր ըսուած է. «Աստուած էշերը ստեղծեց անարգելու համար, հայերը՝ շարդուելու: Թուրքիոյ մէջ ռեժիմ պիտի փոխուի-հայերու շարդ, շերիաթ պիտի հաստատուի- հայերու շարդ, Սուլթան պիտի գահակալէ- հայերու շարդ: Բայց այս բոլորն այնքան տարօրինակ չէ մեզի համար, որքան այն յուսահատեցուցիչ «խելօքութիւնը», որով հայերը կ'ողջունեն շարդերը: Ե՛րբ պիտի այս ժողովուրդը սորվի մարդկայնօրէն կատողի...»:

Ահա մեր ժողովուրդը «մարդկայնօրէն կատողեցնելու», գերութեան վեց հարիւր տարուան ճնշուած արժանապատուութիւնը արթնցնելու ճիգին մէջ էին նոր սերունդի բանաստեղծները՝ Սիամանթո, Վարուժան, Սեւակ...

Հայ գրականութեան մէջ հայրենիքին նուիրուած անհամար քերթուածներ կան: Արդ կը յիշեմ անոնցմէ ամենէն յատկանշականները՝ խտացուած հայոց պատմութիւն-քերթուածներ, ինչպէս՝ Չարենցի «Ես Իմ Անուշ...», Թումանեանի «Հայոց Լեռներում», «Հայրենիքիս Հետ», Իսահակեանի «Արարատին», Վարուժանի «Ձօն», «Անկայծ ճրագ», Շիրազի «Մենք Խաղաղ Էինք...»: շատ են: Սեւակ ունի ընդամենը վեց տողոնց քերթուած մը, որ խտացումն է հայ ժողովուրդը պատուհասած աղետներուն: Քերթուածի որեւէ մեկնաբանութիւն անելիք է, քանի բանաստեղծը յստակօրէն, խիտ տողերու զուսպ ու ազդեցիկ պատկերներով ամփոփած է արեւմտահայոց ապրած բոլոր արհաւիրքները՝ երկիրն ամայացնող ակամայ

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ (3)

Արմենակ Եղիայեան

Դրաստամատ Կանայեան: Ծննդաբան փոքրիկ Հայաստան դարձնողներու շարքին իր ուրոյն տեղը ունէր Դրաստամատ Կանայեանը՝ զօր. Դրոն, որ այն օրերուն կայտառ ծերունի մըն էր, իր կարգին 70-նոց մը՝ Վրացեանին հասակակից, սակայն անհամեմատ աւելի աշխուժ ու կենսունակ:

Ան կը բնորոշուէր իր ուղիղ, առողջ ու կոկիկ կերպարով, շարժումներու թեթեւութեամբ եւ դէմքի մեղմ փայլով մը, որ անջնջելի կը մնար: Չինքը նոր տեսնողը կամ անոր նայուածքը առաջին անգամ որսացողը կրնար այնպէս կարծել, թէ ան կը ժպտի իրեն, սակայն շատ շուտ կ'անդրադառնար նաեւ, որ այդ «ժպտող» իրեն ուղղուած չէ, այլ ի բնէ դրոշմուած է անոր դէմքին վրայ ու մաս կը կազմէ անոր բնախօսութեան (physiologie): Ան կը ձգէր տպաւորութիւնը միշտ գոհ, միշտ ուրախ, ամէն բանի մէջ յաջողած եւ իր կեանքը ըստ իր ցանկութեան կազմակերպած ու լիացած մարդու մը, որ ոչ մէկ անհասարկ ու զղջում ունէր:



Ծննդաբանի օրերուն

Դրոն եւ Վրացեանը ունեցած են մօտաւորապէս յիսնամեայ անստուեր մտերմութիւն մը, եւ այս ամբողջ ժամանակը անոնք ներդաշնակ գոյացած են՝ մէկը իր գրիչով եւ միւսը իր սուրով այնքան ատեն, որ իրարմէ անջատ ապրած են: Բայց դիպուածը այնպէս կը դասաւորէ, որ անոնք սենեկակից դառնալին Լիբանանի մէջ, եւ անոնց յարաբերութիւնը բնորոշող ներդաշնակութիւնը խախտէր, ամէն բան տակնուվրայ ըլլար:

Ահա թէ ինչպէս:

Անոնք կը բնակէին Ծննդաբանին անմիջապէս կից շէնքի մը մէջ ու կը բաժնէին նոյն սենեակը կամ թերեւս նոյն փոքրիկ յարկաբաժինը, եւ այս բնակակցութիւնն ալ կը խախտէ անոնց երբեմնի համերաշխութիւնը՝ մղելով Վրացեանը շատ յաճախ բողոքելու անոր շռայլութենէն, մտաւարներէն ու անփութութենէն:

Ուրեմն Դրոն, ծագումով շատ բարեկեցիկ ընտանիքի գաւազ, կը սիրէր հագուելի-շքուիլ այն աստիճան, որ ինամատար կնոջ հերթական լուացքները չէին հասներ փոխարինելու անոր արագօրէն սպառող փոխարինողները, եւ ան կը դիմէր Վրացեանի օժիտին, որ, ծագումով ծայրայեղօրէն աղքատ ու ժուժկալ ընտանիքի գաւազ ըլլալուն, գերծ էր ընկերոջը մտաւարներէն եւ ինայոգութեամբ կը գործածէր իր առարկաները: Դրոն ձեռք կը գտներ, սակայն, անոնց ալ տակէն մտնելու ու վրայէն ելլելու՝ ըստ կարիքի, եւ երբ Վրացեան պէտք ունենար գուլպայ մը կամ շապիկ մը փոխելու, դատարկ կը գտներ իր գորգները, մինչ փոխարէնը բերնէ-բերան լեցուն կ'ըլլար այն կողովը, ուր կը նետուէին Դրոյի փոխած ու լուացքի սպասող տաբատները, շապիկներն ու գուլպաները, որոնք երբեմն ալ հոս-հոն անխնամ ձգուած կ'ըլլային կամ ալ ծածուկ թխմուած կ'ըլլային անտեսանելի անկիւններ՝ «Սիմոնի աչքերից հեռու»:



Կամաւորական գունդի հրամանատար՝ 1915

Եւ կը սկսէր անխուսափելի բախումը ընդմէջ երկու հսկաներուն՝ երբեմնի սպարապետին ու վարչապետին, մինչեւ որ ձեռք գտնէին, - եւ այդ ձեռք անխուսափելիօրէն կը գտնուէր, - սովորականին պէս հաշտ ու համերաշխ դուրս գալու՝ համակ ժպտ ու ջերմութիւն՝ ցուցադրելով ըստ ամենայնի միաբան, միակամ ու սիրալիր գոյգ մը, որ կարծես տօնավաճառի երթալու կը պատրաստուի:

Պէտք չէ մտահան ընել այն անհուն հիացումը, որ Վրացեան ունեցած է ազատամարտիկ Դրոյի հանդէպ: Իրեն կը պատկանի այն ամենաշոյիչ բնորոշումը, որ երբեք չէր տրուած ըլլայ երբեմնի զօրավարին: Արդարեւ, Վրացեան անոր կեանքին ու գործին նուիրուած իր մէկ հիանալի աշխատութիւնը կոչած է «Մորկածին Դրոն»:

Անով հանդերձ ան չէ վարանած երբեմն ալ կսմբելու գայն, մասնաւորաբար ինչ կը վերաբերի գիրի, գրականութեան եւ ուսումնառութեան մէջ անոր ցուցաբերած, - աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ չունեցած, - հետաքրքրութեան:

Այդ կսմբութիւնն մէկը կը հասնի Դրոյի թեմական վարժարան յաճախած տարիներուն՝ անոր ծննդավայրին՝ Իգտիի մէջ:

Ուրեմն մօտաւորապէս 16 տարեկանին ան այլեւս բոլորովին կը ձանձրանայ յաճախելու դպրոց, որու ծրագիրը չի հետաքրքրէր զինք, եւ ան ժամանակը կը յատկացնէ, դասերէն բացի, քիչ մը ամէն բանի, մասնաւորաբար թափառելով ռուսական բանակի զօրանոցներուն շուրջ,

դիտելով անոնց մարտական փորձերը եւ իր կարգին կազմակերպելով ընկերներու հետ իր սեփական ջոկատները, անշուշտ միշտ ի՞ր հրամանատարութեամբ, բաներ որոնք յուսահատութեան կը մատնեն հաստատութեան տնօրէնը, որուն իսկական մղձաւանջը դարձած է պատանի Դրոն, որ իր կռակին պաշտպան ունի մեծահարուստ ու ազդեցիկ հայր մը:

Ան ի գուր կը մտմտայ նման փորձանքէ ձերբազատելու միջոց մը գտնել՝ առանց յաջողելու, մինչեւ որ բարեբաստիկ օր մը Դրոն կ'որոշէ մտնել զինուորական ակադեմիա, որուն ծրագիրը շատ աւելի կը պատշաճէր իր նկարագրին ու կը հրապուրէր զինք, սակայն այնտեղ մուտքը կը պահանջէ ուսումնական այնպիսի մակարդակ մը, որուն գոհացում տալէ շա՛տ հեռու էր ինք. իր ունեցած նիշերով ակադեմիային քովէն իսկ չի կրնար անցնիլ:

Եւ ահա կը սկսի մթին սակարկութիւն մը իր եւ տնօրէնին միջեւ.

- Եթէ նիշերս փոխես, դպրոցը կը ձգեմ, ու ինձանկից կ'ազատուես...

Երկար տատանումներէ ետք՝ տնօրէնը ճարահատ կը յօժարի փոխել անոր վիճակացոյցը՝ պատրաստելով նոր մը եւ նշանակելով այնպիսի նիշեր, որոնք շատ լայն պիտի բանային ակադեմիայի դռները Դրոյի առջեւ: Եւ գայն յանձնած պահուն եւ առանց նուազագոյն հաւատքի՝ «ի սրտէ յաջողութեան անկեղծ մաղթանք» կը կատարէ «ապագայ զօրավարին»:

Բոլոր նշանները ցոյց կու տան, որ հեզնանքով ու խոր թերահաւատութեամբ կատարուած այդ մաղթանքը... կ'իրականանայ:

Գործելով Վրացեանն է պատմողը:

Կը պատահի, որ Եղեմնէն առաջ առիթով մը Արաքսի ափին միատեղ գտնուէին ինք, բժ. Տեր Դաւթեանը եւ Ռոստոմը, երբ ծիաւոր սուրհանդակ մը կը հասնի եւ զլիարկին մէջէն հանելով՝ վերջինիս կը յանձնէ նամակ մը Դրոյէն, որ այն օրերուն երեսութեամբ առեւտուրով, սակայն խորքին մէջ տեղեկահաւաքով կը զբաղէր Արեւմտեան Հայաստանի մէջ՝ «Սուրեն Էֆենտի» ծածկանունով: Ռոստոմ կը բանայ նամակը, կը փորձէ կարդալ ու չի յաջողիր: Ռոստի կը յանձնէ գայն Վրացեանին, որ իր կարգին չի կրնար կարդալ, ապա ձեռք կ'առնէ Տեր Դաւթեան, որ նմանապէս կը ձախողի:

- Մէկ ճար կը մնայ, - կ'եզրակացնէ Ռոստոմ, - պէտք է հեռագրել Դրոյին, որ գայ ու ինքը կարդայ իր գրած նամակը:

Տեր Դաւթեան քիթին տակէն կը ծիծաղի:

- Ինչո՞ւ կը ծիծաղիս, - կը հարցնէ Ռոստոմ շուարած:

- Օգուտ չունի գալը, որովհետեւ ինք ալ չի կրնար կարդալ գրածը...



Երիտասարդ տարիներուն

Դրոյի մէկ ոտքը Ծննդաբան էր միշտ, իսկ միւսը ամէն տեղ էր, ուր հայ կար՝ Պուրճ-Համմուտ, ուր երբեմն դասախօսութիւն ալ կու տար, Անճար, ընդհուպ մինչեւ Հալէպ, Զամիշի եւ շրջանները, ուր ձեռք կը գտներ զինավարժութեամբ ալ զբաղելու «բալիկների հետ»: Անոր կը վերագրուէին ուրիշ բաներ եւս, որոնք սակայն մեր «գլուխէն վեր» հարցեր էին եւ մեզի ըմբռնելի չէին: Մեզի համար ան բազմաթիւ թուրք, ռուս ու հայախոս ոստիներու ահաբեկիչն էր, աւելի ուշ՝ կամաւորական երկրորդ գունդի հրամանատարը՝ զօրավարի աստիճանով, օգնական ունենալով Արմէն Գարօն, որ 1915-ին հասաւ մինչեւ Վան ու Արճէշ, իսկ երեք տարի ետք պաշտպանեց Բաշ-Ապարանի ճակատը՝ թրքական հորդաներուն դէմ:


Անողորմ հիւանդութիւնը ստիպեց այս պողպատակուռ մարդը, որ 1956-ին անակնկալօրէն հեռանայ Լիբանանէն, ուր այնքան լիացած կը զգար ինքզինքը, դարմանում մը գտնելու համար Միացեալ Նահանգներու մէջ, ուրկէ ա՛լ չկրցաւ վերադառնալ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ 2արմիկ Զիւլքոչեան-Պողիկեան
Սրբագրիչ՝ 2եփիւռ Պապիկեան-Աւագեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլքոչեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
 - Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
 - Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
 - Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
 - Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ՄՐՋԻՆԻՆ ԹԱՂՈՒՄԸ



Սեան Ասատուրեան-Մանճիկեան

Սերոբ քեսապցի, աշխատասեր մանչուկ մըն էր, հինգերորդ կարգի աշակերտ: Անոր հայրը ամառուան արձակուրդին երբ անգործ ու անբան կը տեսներ Սերոբը, զինք զբաղեցնելու միտումով տան փակին ծառերը ջրել կու տար անոր: Իւրաքանչիւր ծառի տակ ջուր կուտակելու համար, ան մահիկի ձեւով բացուած փոսերուն մէջ ջուրի խողովակը տասնհինգ վայրկեան պիտի պահէր, ապա յաջորդ ծառին պիտի անցներ ու այդպէս գործը պիտի շարունակէր մինչեւ որ փակի բոլոր ծառերը ջրեր: Միայն այդպիսով գործը ավարտած պիտի ըլլար:



Հակառակ անոր, որ հողագործութիւնը իր նախասիրութիւններուն մաս էր կազմէր, այնուամենայնիւ հորը օգնելու եւ անոր գործը թէթեւցնելու միտումով սիրայօժար ընդունեց գործը՝ առանց դժգոհելու ու տրտնջալու:

Սերոբ առաջին օրուան գործը սկսաւ գետին քովէն, մերթ աչքերը ջուրին յարելով, մերթ ալ աչ ու ձախ պտտեցնելով՝ տեւաբար այլ զբաղում մը գտնելու փնտռտուքի մէջ: Տան փակի ջրուելիք ծառերը 13 հատ էին, բաւական ժամանակ կը պահանջէին: Ան ժամերը դասաւորեց, վերցուց դրա եւ ջրելու գործը երկու օրերու վրայ բաժնեց, որպէսզի չձանձրանայ: Սկսաւ ծառերուն չորս կողմի քարերը վերցնելով թիք-թաք մէկը միւսին գարնել, պզտիկ քարերը մեծ քարերուն շուրջ շարել ու անոնցմով արեւի շողեր յառաջացնել, ու ամէն անգամ երբ քարերով յայտնագործում մը իրականացնել յաջողէր, ուրախ-գուարթ նորի մը մասին կը մտածէր ու այդպէս ժամանակը կը սահէր...:

-Ի՞նչ սիրուն արեւ գծած ես քարերով, Սերոբ, երբեք մտքես չէր անցած, որ քարերով արեւ կրնամ գծել, . . . ըսաւ Սոնան՝ Սերոբին փոքր քոյրը: Ապա եղբոր կողքին նստաւ, ու ինք ալ փորձեց քարերով բան մը գծել:

-Եկուր մրջիկին գերեզման շինենք, . . . ըսաւ Սերոբ:

-Գերեզման... մրջիկին... այդ ինչպէ՞ս կ'ըլլայ, . . . զարմացած հարցուց Սոնա:

-Այո՛, գերեզման: Ես երեկ, երբ հայրիկին հետ մեր դրացիներուն պապուկին թաղումին գացի, տեսայ ինչպէս կ'ընէին:

Երկուքը միասին սկսան փոս մը փորել, քիչ մը իրենց փոքրիկ մատներով, քիչ մըն ալ անդին նետուած, չորցած ճիւղի մը օգնութեամբ: Գործին վարպետը Սերոբն էր, ան էր ցուցմունքներ տուողը: Երբեմն, երբ Սոնա անտեղի քարեր կը շարէր, Սերոբ համբերութեամբ կը բացատրէր, կը սրբագրէր, աճապարելու բան չունէր, հանդարտ ու մեղմ կը թելադրէր.

-Սոնա՛, քարերը եթէ այս ձեւով շարես, գերեզմանի չէ՛՝ ճաշարանի կը սկսի նմանիլ շինածոյ, կամ ալ մեր դպրոցի շէնքին:

Փոսը բանալու գործը ավարտելու վրայ էին, երբ Սոնա հարցուց եղբոր.

-Սերոբ, մեռած մրջիկն ուրկէ՞ պիտի գտնենք:

-Հոգ մի՛ ըներ: Քիչ առաջ, երբ հայրիկը ջուրին ծորակը բացաւ, խողովակը փրթաւ ու այդտեղ զինուորական, կարգապահ շարքի մը նման տողանցող մրջիկի շարքէն քանի մը մրջիկն ջուրին մէջ խեղդուեցաւ:

Սերոբ գնաց մրջիկները բերելու, իսկ Սոնա սուս ու բուս նստած, աչքերով կը հետեւէր Սերոբին, տեսնելու, թէ ինչպէ՛ս պիտի բերէր մրջիկները: Սերոբ տերեւի մը վրայ տեղաւորեց գանոնք ու այդ տերեւին կրթէն բռնած վերադարձաւ: Տերեւն ու մրջիկները տեղաւորեց փոսին մէջ ու թաղեց:

Մայրս Քեսապի բառքարով կ'ըսէր «եաշխօքը չուծօս պըր է՛ ըննուս», որ կը նշանակէ՝ «աշխարհին մէջ մանուկ պիտի ըլլաս, որպէսզի այդպիսի բաներ ընես»: Իսկ եթէ մանուկ չըլլաս եւ մանուկներու երեւակայութիւն չունենաս, մտքիդ ո՞ր ծայրէն պիտի անցնի մրջիկի թաղում կատարելը:

Այդպէս Սերոբ ծամե-ծամ կ'անցներ ու ամէն ծառի տակ ինքզինք զբաղեցնելու հնարք մը գործի կը դներ, իսկ երբ երկու օրուան ծառ ջրելու գործը ավարտեց, քարերու արուեստին տիրապետած էր արդէն:

ՀԵՔԻԱԹ



Սարհն Ազպաշ


Պատիս վրայէն յամառօրէն կոչ կ'ուղղէ այս շրջանակը: Յիշեցում մըն է ան, երբեմն ազդարար մը կամ թելադրանք մը: Իր գուսպ եւ պարզ շրջանակին մէջէն, դեղին էջի մը տողերէն կը յանդիմանէ, կը ձայնէ. «Բոլորս սեւագիրներ ենք անդադար սրբագրուող»:

Յաճախ կը մտածեմ, մարդ ե՞րբ կատարեալ «ես»ին կը հասնի: Երեսո՞ւն տարեկանին, վաթսուհի՞ն, կա՞մ անհաս, անյայտ այդ տարիքին: Ճերմակ էջի մը վրայ կատարեալ մաքրութեամբ սկսող այդ հեքիաթը ինչո՞ւ սրբագրութիւններու կ'ենթարկուի: Այդ կարմիր գրիչները ինչո՞ւ սառնասիրտօրէն կը փորձեն բոլոր հեքիաթները նոյն տառատեսակով տպագրել եւ նոյն յորդորներով կաղապարել:

Իւրաքանչիւր անձ հեքիաթագիր մըն է եւ ի ծնէ յանձն առած է այդ ճերմակ թուղթերը լրացնելու պարտականութիւնը: Հոգին թանաքի կը վերածէ ու կը թրջէ գրիչը:

Կը սկսի գրել. «Կար ու չկար...»: Այս ծանօթ արտայայտութիւնն յետոյ, արտաքին եւ ներքին բոլոր ազդակները անձնուիրաբար գործի կը լծուին:

Արտաքին սրբագրիչները կը փորձեն վաղեմի հեքիաթի մը վերածել տողերը, իսկ ներքին սրբագրիչը՝ անյազ փափաք մը կ'ունենայ այդ վաղեմի հեքիաթին նմանելու: Սակայն վերջաւորութեան, ճերմակ թուղթը կարմիր գրիչին արձակած նետերով կը նետահարուի եւ կ'արիւնի: Հեքիաթը այդ սպիներով կը գրուի եւ երբեք միատեսակ չ'ըլլար:



Հապա ի՞նչ կը պատահէր, եթէ երբեք չսրբագրուէր իւրաքանչիւրիս հեքիաթը: Այդ ձիւնաթաթախ թուղթին վրայի հեքիաթը այսօր մեր ունեցածին կը նմանե՞ր: Ինչպիսի՞ ընթացք մը եւ վերջաւորութիւն մը կ'ունենար: Հարցումները անվերջ են, սրբագրութիւններն ալ: Սակայն մէկ բան յստակ է՝ հեքիաթը այդ սպիներով կէտնք կ'առնէ ու կը գեղեցկանայ: Կարմիր գրիչին հարուածը ուժ կու տայ թուղթին եւ հեքիաթը թելեր կ'առնէ, կը սլանայ:

Երբեք չենք մոռնար այդ առաջին անբիծ ճերմակութիւնը: Կը նկատենք հորիզոնին վերջնագիծը ու կը հիանանք ձիւնաճերմակ տարածութեան անմեղութեամբ: Ճարահատեալ կը բանանք ուղի մը ձիւնով ծածկուած այդ ճամբուն վրայ ու կը սկսինք քալել: Որքան կը քալենք, այդքան ոտնահետք կ'աւելնայ ձիւնին վրայ, բայց մենք երբեք չենք մոռնար այդ առաջին ջինջ ճերմակութիւնը:

Չսրբագրուած ամէն ինչ մեր «կապոյտ տուներուն մէջ երկինքէն անդին են»: Ահաւասիկ այդ կապոյտ տան պատուհաններէն մէկն ալ բացուած է իմ պատին վրայ, որ ամէն օր իր դեղին լոյսով աչք կը թարթէ ինձի՝ յիշեցնելով, որ բոլորս սեւագիրներ ենք անդադար սրբագրուող: Անցեալի, ներկայի եւ ապագայի սրբագրուած եւ դեռ չսրբագրուած բոլոր հեքիաթներու կամուրջն է Չահրատի այս ձեռագիրը: Անոր չսրբագրուած «կապոյտ սարերը երկինքէն անդին» մանկութեանս կար ու չկարը կը պարուրեն:

Ահա հոգիս թանաքի կը վերածեմ ու գրիչս կը թաթխեմ: Կար ու չկար...

Ռուբէն...

Սկիզբ՝ էջ 14

պանդխտութիւն, սովահարութիւն, այն պարագային երբ Թուրքիան կերակրողը հայերն էին, ու շարդերը...

Ռ՞վ կու լայ այսպէս խշտակիս շեմին.

-Ըն՞ոյր, դարիպն է, բա՛ց...

Կմա՛խք մը կ'անցնի դուրսէն լալագին.

-Սո՛վն է, դուռդ բա՛ց...

Տապա՛րն է ջախջախ դրանս կուրծքին.

Ջա՛րդն է, դուռդ բա՛ց...

Մշտապէս այս նիւթերուն առնչուելով՝ յաճախ կ'ունենամ միտք մը՝ եթէ այսօր թուրքը իրապէ՛ս ըլլար քաղաքակրթուած ու փոխած իր արիւնմուշտ բնոյթը՝ հայ բանաստեղծներու (ու ոչ միայն հայ) գործերուն կարեւոր մէկ մասը՝ պայքարի կոչերը այլեւս գրականութեան պատմութեան պիտի անցնէին... մինչդեռ անոնք այսօր ալ կը մնան այժմեական ու զմեզ սթափութեան կոչող...:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Այս շաբաթ ստիպուած էք շատ աշխատելու: Ձեր յաջողութիւնները անկատ չեն անցնիր, նոր գործընկերներ ու համախոհներ կը գտնեք:



ՏՈՒ

Անհանգիստ, երբեմն լարուած, բայց շատ արդիւնաւետ շաբաթ է: Յարմար է նոր պատասխանատուութիւն ստանձնելու համար:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Շաբթուան սկիզբը զգուշութիւն ու խելամտութիւն կը պահանջուի ձեզմէ: Անհրաժեշտ է զգուշութեամբ գործել, գաղտնապահ ըլլալ եւ հեռու մնալ բամբասանքներէ:



ԽԵՅԳԵՏԻՆ

Այս օրերուն դուք վեճերու ընթացքին կարողութիւն կ'ունենաք կառուցողական երկխօսութիւն վարելու եւ բոլորին յարմարող լուծում գտնելու:



ԱՌԻՇ

Շաբաթը առանց դժուարութիւններու է՛նչ անցնիր, բայց դուք դիրաւ կը յաղթահարեք զանոնք: Յուզական դաշտը բարենպաստ է, ձեր տրամադրութիւնը բարձր կը մնայ այս շաբաթ:



ԿՈՅՍ

Բարդ շաբաթ է: Նոյնիսկ համեստ արդիւնքներու հասնելու համար պէտք է ջանքեր գործադրեք: Երբեմն ձեզի կը թուի, թէ նպատակին հասնիլը վայրկեաններու հարց է: Համբերատար եղէք:



ԿՇԻՈՔ

Եթէ այս շաբաթ ձեր ժամանակը չվատնեք, քանի մը օրուան ընթացքին շատ բան կ'իրականացնէք: Ընկերային կեանքը ուշադրութեան արժանի է: Յաճախակի կապ հաստատեցէք ձեր ընկերներուն հետ:



ԿԱՐԻՃ

Մարդոց խրատները կրնան երբեմն ի նպաստ ձեզի չըլլալ: Ձեր անձնական ծրագիրը ունեցէք ամէն գործի եւ յարաբերութեան մէջ:



ԱՂԵՂՆԱՒՈՐ

Մակերեսային տեղեկութիւնը կրնայ իրականութեան չհամապատասխանել, իսկ առաջին տպաւորութիւնը յաճախ սխալ կ'ըլլայ: Մարդիկ ճանչնալու համար խորաթափանց եղէք եւ վստահեցէք ձեր տրամաբանութեան:



ԱՅՇԵՂՁԻՐ

Մի՛ հաւատաք անիրականանալի խոստումներ տուող մտերիմներուն: Չգոյշ եղէք եւ անձամբ իրականացուցէք ձեր երազները:




ՋՐՅՈՍ

Բարենպաստ շաբաթ է, յագեցած ոգեշնչող նորութիւններով ու հետաքրքրական ընկերութիւններու հաստատումով:



ՁՈՒԿ

Եթէ օգնութեան կարիք ունենաք, բարեկամներու դիմեցէք եւ անկեղծօրէն ձեր հարցերը պարզեցէք: Հաւանաբար անոնց օգնութիւնը հանգուցալուծէ բարդ համարուող հարցերը:



Սոնա Տէր Պօղոսեան-Տարաքճեան

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ, ԿՐԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Պսակածել ժահրի համաճարակը բարդ դարձուց մեր կեանքը: Թէ՛ ծնողներուն, թէ՛ երեխաներուն համար դպրոց վերադառնալն ալ մտահոգիչ դարձաւ:

Միշտ ի միտի պէտք է ունենալ սակայն, որ պետական եւ կրթական մարմիններ նկատի կ'առնեն համաճարակային իրավիճակը, հանրութեան առողջութիւնը, կրթութեան սպառնացող վտանգները եւ դպրոցներուն վերաբացման համար անհրաժեշտ նախագիշտական միջոցները կ'ապահովեն:

Ուրեմն սկսիք վերամուտը լաւատեսութեամբ, զգուշութեամբ եւ անհրաժեշտ գիտելիքներ հրամցնելով մեր ծնողներուն, աշակերտներուն եւ կրթական պատասխանատուներուն:

ՎԵՐՅԻՇԵՆՔ ԶԱՆԻ ՄԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Փոքրիկները ամէն առաւօտ, գիրքերով լեցուն պայուսակները շալկած կ'ուղղուին դպրոց: Դպրոցական պայուսակը պէտք է ըլլայ ճիշդ կառուցուածքով՝ երկու ուսագօտիով: Մէջքի հատուածը պէտք է ըլլայ կոշտ, կարծր կամ արհեստական նիւթերով պատրաստուած:

Առաջին դասարանի աշակերտներուն համար գիրքերով եւ գրեկական պիտոյքներով լեցուն պայուսակին ծանրութիւնը պէտք է ըլլայ 3-3,5 քկ, ոչ ավելի:

Այս մէկը կը նշանակէ, որ ծնողները պէտք է նկատի առնեն նաեւ պարապ պայուսակին ծանրութիւնը:

Պայուսակին ծանրութիւնը իւրաքանչիւր ուսումնական տարի 0,5 քկ-ով կրնայ աւելնալ:

-Ծանր պայուսակին պատճառով կրնան յառաջանալ ողնայարի շեղումներ եւ ցաւեր, ոչ միայն ողնաշարին, այլեւ մէջքի հատուածին մէջ:

Դպրոցական օրերուն մանուկներուն ցաւերէ գերծ պահելու համար բժիշկներ կը թելադրեն նաեւ, որ փոքրերը դպրոցական գրասեղանին ետեւ ճիշդ դիրքով նստին, հետեւելով «երեք 90-աստիճան անկիւն» կանոնին՝ ծունկի, կոնքի եւ արմուկային յօդերու պարագաներուն: Նստած ատեն բոլոր յօդերը պէտք է 90 աստիճան անկիւն կազմեն: Այս ձեւով մկանային ամբողջ համակարգը հանգիստ վիճակի մէջ կ'ըլլայ: Եթէ այս աստիճանները փոխուին, մկանային զանազան խումբերու վրայ լարուածութիւններ, ապա նաեւ ցաւեր կը յառաջանան:

Մասնագէտներ կը թելադրեն կեցուածքի շեղումին կամ ողնաշարի ցաւերու յառաջացման պարագային զբաղիլ լողալով, որովհետեւ այդ պարագային բոլոր մկանները հաւասար լարուածութիւն կ'ունենան եւ թեթեակի կը տանին աւելորդ ծանրաբեռնուածութիւնը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՍԱՐԱՆ

Դպրոցական նստարանը կամ գրասեղանը նախատեսուած է երկու աշակերտի համար: Ան յայտնաբերուած է 1870-ին:

Յայտնի ռուս մասնագէտ Ֆիոտոր Ֆիոտորովիչ Էրիսման 28-տարեկանին հրապարակած է գիտական աշխատասիրութիւն մը՝ «Դպրոցներու ազդեցութիւնը կարճատեսութեան յառաջացման վրայ» խորագիրով: Ան ուսումնասիրած է աչքի եւ մարմնական հիւանդութիւններու յառաջացման կախուածութիւնը գրասեղանին ետեւ աշակերտին սխալ դիրքի հետեւանք: Ըստայնմ ան թելադրած է.

-Յատուկ կահոյք ներառնել դպրոցական կեանքին մէջ:

-Պատրաստել այնպիսի դասագիրքեր կամ տետրակներ, որոնք կարելի ըլլայ կարդալ միայն ուղիղ անկիւնով:

-Ընթերցելու հեռաւորութիւնը պէտք է ըլլայ՝ 30-40 սմ:

Ժամանակին գրասեղանները կ'օգտագործուէին միայն յայտնի դպրոցներու մէջ:

Ըստ մասնագէտին, դպրոցական գրասեղանները կազմելու ատեն պէտք է նկատի առնել հետեւեալ պայմանները.

-Դպրոցական գրասեղանին կառուցուածքը պէտք է լիարժեք փոքրիկին զարգացման ընթացքը:

- Դպրոցական գրասեղանը պիտի չունենայ սուր անկիւններ, դուրս ցցուած մասեր, որպէսզի փոքրիկը չվնասուի:

- Դպրոցական գրասեղանը պէտք է ունենայ պարզ եւ ամուր կառուցուածք, որպէսզի սպասարկելի ըլլայ:

- Դպրոցական նստարանին նստած աշակերտը պէտք է իր դիրքով խանգարէ կողքը նստող ընկերը: Ան պէտք է կարելիութիւն ունենայ ոտքի պատասխանելու ուսուցիչին հարցումներուն, առանց նստարանէն հեռանալու:

- Դպրոցական նստարանը այնպէս մը կառուցուած պէտք է ըլլայ, որ կարելիութիւն տայ աշակերտին տեղաւորուելու ճիշդ կեցուածքով:

-Աշակերտին ոտքերը պէտք է գետին հասնին:

-Աշակերտին ծունկերուն եւ գրասեղանին միջեւ հեռաւորութիւնը պէտք է ըլլայ մօտ 10-15 սմ:

-Գրասեղանին գոյնն ալ շատ կարեւոր է, քանի որ ան կրնայ ազդել աշակերտին կեդրոնացումին վրայ: Անհրաժեշտ է ընտրել բաց սրճագոյնին երանգները, որովհետեւ անոնք կը հանգստացնեն աշակերտը:

Բարի եւ արդիւնաւետ վերամուտ կը մաղթենք բոլորին:





Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Կիրակի օր Դամասկոսի մեջ տեղի ունեցավ Սուրիոյ Պաշտօնի Դաշնության անդամական արտակարգ նիստը, ուր ներկայ գտնուեցան Սուրիոյ Ա. Ե. Բ. դասակարգերու մասնակից ակումբներու ներկայացուցիչները: Ժողովին ներկաները մեծամասնութեամբ ընդունեցին նախկին նախագահ ճալալ Նաքրաշի հրաժարականը: Յառաջիկայ շրջանին համար կազմուեցաւ քառանդամ մարմին մը, նախագահութեամբ Ալաա Ճուխաճիի, իր հետ ունենալով Սալամ Ալլաուի, Թարիֆ Զոթրաշ Եւ Իատ Սիպաաի:

- Հըրթին խումբի խաղացող Մարտիկ Մարտիկեան յառաջիկայ տարեշրջանին համար բանակցութիւններ կը վարէ եգիպտական խումբի մը հետ մաս կազմելու անոր:

- Սուրիոյ հաւաքականի նախկին խաղացող Մահմուտ Սաուաս համաձայնութեամբ հեռացաւ Զաթարի Էմ Սիլալ ակումբէն: Ան բանակցութիւններ կը վարէ Սեուտական Արաբիոյ ալ Ահլի ակումբին հետ, հաւանաբար ալ Ումար Սոմայի հետ մէկ խումբի մէջ պիտի խաղան:

- Սուրիոյ ախոյեանութեան Բ. դասակարգի ախոյեանական մրցումներու աւարտին, Հալեպի Հուրիէն Եւ Դամասկոսի Հարճալէ խումբերը բարձրացան Ա. դասակարգ: Այսպիսով յառաջիկայ տարեշրջանին Հալեպ պիտի ներկայանայ երկու ակումբներով՝ Իթթիհատ Եւ Հուրիէ:



ԿԱՐԻԷՐ ՊԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՐ ԹՈԹԵՆՅԱՍ

Սպանիոյ ախոյեան Ռեալ Մատրիտի յարձակողական խաղացող Կարիէր Պել հինգ տարուան պայմանագրով միացաւ Անգլիոյ Թոթենհամ ակումբին: Երբ պսակաձեւ ժահրի համաճարակէն ետք ախոյեանական մրցումները կրկին ընթացք առին, Պել Ռեալի հետ իր մասնակցութիւնը բերաւ միայն մէկ մրցումի ընթացքին: Այլ առիթներով ախոյեան խումբի ֆրանսացի մարզիչը յայտնեց, որ Պել պետք է նոր ակումբ մը որոնէ Եւ անոր միանայ: Աւելցնենք, որ Ուելզիայի խաղացողը Թոթենհամին մաս կազմած է 2007-էն 2013, որմէ ետք միացած է սպանական խումբին Եւ անոր հետ կրցած է տիրանալ զանազան տիտղոսներու: 2014-2016-2017-2018 Եւրոպայի ախոյեան, 2014-2016-2017-2018 համաշխարհային ակումբներու ախոյեան, 2014-2016-2017 Սպանիոյ Սուփըր գաւաթի նուաճող, 2017-2020 Սպանիոյ ախոյեան:



կազմած է 2007-էն 2013, որմէ ետք միացած է սպանական խումբին Եւ անոր հետ կրցած է տիրանալ զանազան տիտղոսներու: 2014-2016-2017-2018 Եւրոպայի ախոյեան, 2014-2016-2017-2018 համաշխարհային ակումբներու ախոյեան, 2014-2016-2017 Սպանիոյ Սուփըր գաւաթի նուաճող, 2017-2020 Սպանիոյ ախոյեան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Արթինեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, տուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հօր՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՎԱՐԴԱՆ ԱՐԹԻՆԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալին քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Սեպտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցոյ մէջ, Սալիպէ-Հալեպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունին հանգուցեալին բնակարանէն ներս:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌՈՍԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ ԻՐ ՆՈՐ ԽԱՂԱՅՈՐԸ

Անցեալ շաբթուան ընթացքին Իտալական Ռոմա ակումբը ներկայացուց խումբին նոր միացած Մարաշ Զոմպուլան: Վերոնա խումբի կիսապաշտպանը երկու տարուան համաձայնութեամբ միացաւ Ռոմային:



Իտալական ակումբը նաեւ իրաւունք ստացաւ Զոմպուլայի փոխադրութիւնը յանձն առնելու, երբ պայմանագրին ժամկետը աւարտին հասնի: Իտալիոյ ֆութբոլի առաջնութիւնը՝ Սերիա Ա.ի 2020/21 մրցաշրջանը սկսաւ 19 Սեպտեմբերին: Յիշենք, որ Ռոմա իր առաջին մրցումը ունեցաւ Վերոնայի հետ, որ աւարտին հասաւ 0-0 հաւասար արդիւնքով: Հանդիպումի ամբողջ տեւողութեան իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայաստանի հաւաքականի խաղացող Հենրիկ Մխիթարեան:


ՊԱՐՏԵԼՈՆԱՅԻ ԽԱՂԱՅՈՐԸ ԱՆԳԼԻՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՅԱԼ

Անգլիական Ուոլվըրհեմփթըն համաձայնութեան հասաւ Սպանիոյ փոխախոյեան Պարսելոնայի հետ Փորթուկալի հաւաքականի 26-տարեկան աջ պաշտպան Նելսըն Սեմեթուի փոխադրութեան հարցով: «The Guardian»-ը յայտնեց որ Ուոլվըրհեմփթըն Սեմեթուի համար վճարած է 38 միլիոն եւրօ: Ան փորթուկալեան Պենֆիլթա ակումբէն Պարսելոնային միացած էր 2017-ին:



Թիւ 24

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար »:



Նախորդ Թիւի Պատասխանն է d 8 #

ՀԱՄԱՐՈՒՄԻ ՀԱՄԱՐԱԿԻ ՅՆՃԻ.

Երկուշաբթի 28/9



21° 35°

Երեքշաբթի 29/9



21° 36°

Չորեքշաբթի 30/9



20° 32°

Հինգշաբթի 1/9



18° 30°

Ուրբաթ 2/10



18° 30°

Շաբաթ 3/10



19° 32°

Կիրակի 4/10



18° 31°

ՀՀ ՆԱԼԵՊԻ ՀԻՊՈՏՈՍՈՒԹԵԱՆ...

Սկզբը՝ էջ 1

սահմանափակ էր: Ընդունելության բացումը կատարուեցաւ Յայաստանի Հանրապետության օրինագով:

Այս ԶՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան բարի գալուստ մաղթելով շնորհաւորեց ներկաները անկախութեան տօնին առիթով եւ շէշտեց, որ Յայաստան 1991-էն մինչեւ օրս՝ 29 տարիներու ընթացքին բազմակողմանի զարգացում ապրեցաւ, յայտնուելով ողջ հայութեան ուշադրութեան կիզակետին վրայ, հակառակ տիրող բազմապիսի դժուարութիւններուն: Այս ան ոգեկոչեց անկախութեան համար իրենց կեանքը նուիրաբերած նահատակները եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրիա գտնուող ՀՀ մարդասիրական առաքելութեան խումբի գնդապետին, սակրաւորներուն, որոնք այսօր ականազերծուած հողատարածք մը յանձնեցին Հալէպի պետական մարմիններուն եւ ժողովուրդին: Այս շնորհակալութիւն յայտնեց նաեւ խումբի մասնագետ բժիշկներուն, որոնք պետական թէ հայկական բժշկական կեդրոններուն մէջ կը ծառայէն ու կեանքեր կը փրկեն: Գլխաւոր հիւպատոսը այս առաքելութիւնը երախտագիտական արտայայտութիւն համարեց Սուրիոյ եւ անոր ժողովուրդին, որոնք Հայոց Տեղասպանութեան տարիներուն գրկաբաց ընդունեցին ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդի զաւակները:

Այնուհետեւ ներկաները միասնաբար հատեցին ՀՀ անկախութեան 29-ամեակին նուիրուած կարկանդակը:

Այս ներկաները հրաւիրուեցան մտերմիկ ընթրիքի, ուր խօսք առաւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Սրբազան հայրը անկախութեան գաղափարը մեր ժողովուրդին առաքելութիւնը համարեց: Առաքելութիւն մը, որուն համար ան պայքարեցաւ ու կերտեց իր անկախ պետութիւնը 28 Մայիս 1918-ին, ապա նաեւ 21 Սեպտեմբեր 1991-ին: «Մեր ժողովուրդը պետականամետ ժողովուրդ է, մէկ բռունցք դարձած կը պայքարի իր պետութեան ամրակայման համար», դիտել տուաւ Գերշ. Սրբազան հայրը, ակեցնելով, որ սուրիահայութիւնը մշտապէս նեցուկ կանգնած է հայրենի պետութեան թէ՛ նիւթապէս, իր բարուք օրերուն, թէ Յայաստան-Սուրիա յարաբերութիւնները ամրապնդելու իմաստով եւ թէ իր հայեացքը տեւաբար Մայր Հայրենիք ուղղելով:

Սրբազան հայրը յարգանքով յիշեց հայ ժողովուրդին ու հայոց պետականութեան համար իրենց կեանքը զոհաբերած հերոսները, աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ անոնց կերտած ուղին ծաղկի նոր յաղթանակներով:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐՊՐՈՒՄԸ ՀԱԼԵՊԱՆՅՈՒՄԻ ԳՆԵՐՈՒՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հալէպահայ ուսուցիչներու ընկերային վիճակի բարելաւման միտումով նիւթական օժանդակութիւն տրամադրեց Հալէպի ՀԲԸՄ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանի, Ազգային Զարէն Եփփէ ճեմարանի, Կիլիկեան ճեմարանի, Կրթասիրաց Ս. Չեմպէրճեան երկրորդական վարժարանի, Հայ Աւետարանական Բեթել երկրորդական վարժարանի, Միսիթարեան վարժարանի, Ազգային Միացեալ Նախակրթարանի եւ Չուարթնոց վարժարանի մօտաւորապէս 370 ուսուցիչներու եւ վարչական անձնակազմի անդամներուն:



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՐ ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆԸ ԲԵՍԱՊ

Չորեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան այցելեց Բեսապի Ազգային Ուսումնասիրաց Միացեալ ճեմարան, ընկերակցութեամբ Առաջնորդի Օգնական Հոգշ. Տ. Մանուկ Աբդ. Պարիխանեանի եւ Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ տիար Զրիստափոր Հապոյեանի:



Առաջնորդ Սրբազան Հայրը շերմապէս դիմաւորուեցաւ ճեմարանի Հոգաբարձութեան կազմին եւ անոր ատենապետ տիար Նշան Լևոնեանի, ճեմարանի տնօրէն տիար Վարուժ Փանոսեանի, ճեմարանի ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ:

Սրբազան հայրը վերամուտի առիթով աշակերտութեան իր սրտի խօսքը ուղղեց, վեր առնելով հայ դպրոցին կարեւոր դերակատարութիւնը մեր կեանքին ներս, ի մասնաւորի Բեսապի հայութեան ազգային արժէքները, աւանդութիւններն ու սովորութիւնները պահպանելու համար: Սրբազան հայրը աշակերտներուն թելադրեց հայերէնին լաւապէս տիրապետել եւ տեր կանգնիլ մեր արժէքներուն: Ան դիտել տուաւ, որ ք ե ս ա պ ա հ ա յ ու թ իւ ն ը տարիներ շարունակ հայ կղերականներ եւ ազգային գործիչներ պարզեւած է մեր ժողովուրդին եւ աւանդութիւնը պահելով աշակերտներուն թելադրեց մեկնիլ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք եւ իրենց ուսումը այնտեղ շարունակելով պատրաստուիլ որպէս ապագայ հոգեւորականներ եւ դեկավարներ: Սրբազան հայրը, գօտեպնդելով ճեմարանի անձնակազմը եւ աշակերտները, թեմիս ժողովականներու անունով բարեյաջող տարեշրջան մաղթեց եւ վերամուտի առիթով հակաանեխիչ նիւթեր եւ դիմակներ նուիրեց աշակերտներուն:



Այնուհետեւ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը դասարանները շրջելով մտերմիկ զրոյց ունեցան աշակերտներուն հետ, որմէ ետք տնօրէնութեան սենեակէն ներս հանդիպում ունեցան վարժարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան հետ: Հանդիպումին արծարծուեցան ճեմարանին դիմագրաւած դժուարութիւնները, յատկապէս պատկածեւ ժահրի համավարակին եւ տնտեսական ծանր իրավիճակին առնչուող հարցեր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕԺԱՆՊԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԵՊԱՆՅՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 17 Սեպտեմբեր 2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ մեկնարկը կատարուեցաւ Յայաստանի Հանրապետութեան կողմէ ուղարկուած մարդասիրական օժանդակութեան բաշխումին: Օժանդակութիւնը պիտի բաշխուի 4000 հալէպահայ ընտանիքի:



Բաշխման առաջին հանդիպումին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբազան Եպս. Չօպուեան, Բերիոյ Թեմի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան, Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Հալէպի Գործադիր Մարմինի անդամներ, ազգայիններ եւ քահանայ հայրեր:

Բացման խօսքով հանդէս եկաւ Յայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան: Ան ըսաւ, որ Յայաստանի Հանրապետութիւնը նկատի ունենալով Սուրիոյ ժողովուրդին տնտեսական ծանր վիճակը որոշեց նիւթական օժանդակութիւնը յատկացնել այս անգամ հալէպահայ ընտանիքներուն, հետագային նաեւ Սուրիոյ մնացեալ նահանգներու հայ ընտանիքներուն:

Այս յիշեց, որ օժանդակութեան նպատակը բարոյական է, հայրենիքը՝ Յայաստանը միշտ սուրիահայութեան կողքին է:

Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան լուսարձակի տակ առաւ հալէպահայութեան դիմագրաւած անցող ամիսներու դժուարութիւնները եւ համաճարակին պատուհասը, յիշելով որ Աստուծոյ օգնութեամբ կրցանք մեր ուժերը համախմբել եւ մեր միասնութիւնը պահելով համաճարակը դիմագրաւել:

Բերիոյ Թեմի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան իր երախտագիտութիւնը յայտնեց Յայաստանի Հանրապետութեան, դիտել տալով որ հայրենիքէն հասած օժանդակութիւնը այլ արժէք ունի հայերուս համար:

Աւարտին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Եպս. Չօպուեան դիտել տուաւ, որ հալէպահայութիւնը պայքարած է իր ազգային, եկեղեցական արժէքներուն պահպանութեան համար, անոր սիրտը կը տրոփէ հայրենիքի համար նաեւ: Ակեցնելով որ մարդասիրական այս օժանդակութիւնը կարեւոր է թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական առումներով: Աւարտին ներկայ ժողովուրդին բաշխուեցաւ օժանդակութեան առաջին մասը: